Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.
Цена 35 коп.

Ն. ՄԵՐՑԱԼՍԿԻ ՅԵՎ Վ. ԳՐՈՄՈՎ

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԳԻՏԵ

ԷՄԻԼ. ԴԱՆՑԻԳԵՐ

# ՊԱՅՔԱՐ ՓՈՂՈՑԻ ՀԱՄԱՐ

ԲԵՐԵՏԻՆՍԿԻ ՅԵՎ ԳԱՐԴՈՎՍԿԻ

# Ա Ր Յ Ո Ւ Ն

Պիեսների ժողովածու

891.71
Մ-66

ԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
32
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

891.71
Տ-66
ար
30 SEP 2006
19 NOV 2010

Ն. ՄԻՐՑԱԼՈՎԻ ԵՎ Վ. ԳՐՈՄՈՎ

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԳԻՏԵ

ՅՈՒՐ. ԴԱՆՑԻԳԵՐ

# ՊԱՅՔԱՐ ՓՈՂՈՑԻ ՀԱՄԱՐ

ԲԵՐԵՑԻՆՍԿԻ ԵՎ ԳԱՐՏՈՎՍԿԻ

# Ա Ր Յ Ո Ւ Ն

Պիեսների ժողովածու

114

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

8 JUN 2013
30 SEP 20..
12.130

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
3284
41

Книгоиздательство
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

Ն. ՄԵՐՑԱԼՍԿԻ ՅԵՎ Վ. ԳՐՈՄՈՎ

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԳԻՏԵ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԻԼՈՒԵՏՆԵՐ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍՈՑԻԱԼ-Դեմոկրատական «Ժողովրդի բարեկամ» լրագրի խմբագիր։
«ԴՐՈՇԱԿ» լրագրի խմբագիր։
ԴԵԼԲ. Սոցիալ-դեմոկրատների առաջնորդ։
ՄՈՐԻՑ. Նրա որդին, բոյսկաուտ։
ՎԵՅՍ. Սոցիալ-դեմոկրատ, ոստիկանության պրեզիդենտ
ԳՆԴԱՊԵՏ, Ֆաշիստ։
ՖՐԱՆՑ. Պատգամավոր գործազուրկների կողմից։
1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ) գործազուրկների կողմից։
2-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ) գործազուրկների կողմից։
1-ԻՆ )
2-ՐԴ.) «Ժողովրդի բարեկամի» ձայները
3-ՐԴ.)
4-ՐԴ.)
ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ՀԵՐԹԱՊԱՀ.
ԱՂԱԽԻՆ.

*Փակ վարագույրի առաջ, լապտերը ձեռին հայտնվում է «Ժողովրդի բարեկամի» խմբագիրը։*

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄԻ» ԽՄԲԱԳԻՐ. Գտնելով, որ ԽՍՀՄ-ում մեծ հետաքրքրություն է ծագում դեպի արտասահմանի բանվորական շարժումները, յես, որպես մեր սոցիալ-դեմոկրատական լրագրի խմբագիր, միշտ ամենայն ճշտությամբ լուսաբանում եմ պրոլետարիատի կենցաղը, աշխատանքը և պայքարը։ Միայն սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, որը և միջի այլոց հրատարակում է իմ խնամքին հանձնված լրագիրը և բարեխղճորեն վճարում է ինձ հասանելիք ռոճիկը, յերկիրը տանում է դեպի սոցիալիզմ։ 1929 թվի մայիսյան անախորժություններից հետո, յերբ մի քանի տասնյակ պրոլետարներ իրենց անզգուշության պատճառով, հանդիպեցին ոդում պատահմամբ սլացող հայտնի չէ թե ում գնդակներին, մի ինչոր լղար

«Դրոշակ» անունով լրագիր անպատվեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության բարի առաջնորդներին, վորոնք ի միջի այլոց աշխատում եյին վոստիկանության մեջ։

«Դրոշակ»-ը նրանց անպատվեց մասսայական մարդասպաններ տերմինով, իսկ մեր լրագրին մեղադրեց, փափուկ արտահայտվելով, ստության մեջ։ Բայց ձիվ կհավատա մի ինչ-վոր «Դրոշակին», յերբ միայն իմ «Ժողովուրդի բարեկամն» է միշտ աչքի ընկնում իր բացառիկ ճշմարտությամբ։ «Ժողովրդի բարեկամը», լուսաբանելով դեպքերը դեղին գույնով (վառում է լապտերը), ոգնում է տեսնել նրանց ավելի լավ, քան «Դրոշակի» կարմիր լույսի տակ։

Յես ձեզ տալիս եմ սոցիալ-դեմոկրատի ազնիվ խոսք, վոր մեր յերկրում լռություն ու խաղաղություն է տիրում և աստվածային... թյու... սոցիալիստական բարորություն. պրոլետարիատը բարեկեցիկ կյանք է վարում և ջերմ պաշտում է հարգելի սոցիալ-դեմոկրատական առաջնորդներին։ (Լրագիրը ճանելով կարդում է) «Յերեկ սոցիալ դեմոկրատ Գելլը գրկաբաց ընդունեց գործադուլավորների պատգամավորությունը, վորը հանձինս նրա գտավ պրոլետարական շահերի իսկական պաշտպանին. պատգամավորությունը բոլոր գործադուլավորների անունից խանդավառությամբ վողջունեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության... (լապտերը ուղղում է բեմի վրա)։

Վարագույրը բացվում է. բեմը բաժանված է յերկու մասի, աջ կողմում-Գելլի ընդունարանն է, իսկ ձախ կողմում նրա կաբինետը։ Նայած թե բեմի վոր մասում է կատարվում գործողությունն, այդ մասը լուսավորվում է դեղին գույնով։

Գելլը կաբինետում քննում է ինչ վոր թղթեր։ Դռան մոտ, սպասող դիրք բռնած կանգնած է ընդունարանի հերթապահը։ Ընդունարան է մտնում գործադուլավորների պատգամավորությունը։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Յես այնուամենայնիվ, ընկերներ, լիովին համոզված չեմ, վոր մեր պատգամավորությունը հաջողություն կունենա։ Իմ կարծիքով. սրանից վոչինչ դուրս չի գա։

ՖՐԱՆՑ. (տաքացած). Ինչպե՞ս թե բան դուրս չի գա։ Մենք—գործադուլավորներ ենք... Մենք—պրոլետարներ ենք.,. Մենք նրան ընտրել ենք և պարզ է, վոր նրա համար թանգ են մեր շահերը։

1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Ո՞վ գիտե.,. կարող է պատահել, գուցե նրան հայտնի յել չե, վոր մենք քաղցից ուռչում ենք, իսկ մյուս կողմից էլ ինարկե, գաղան հո չի... անցյալ տարի, ընտրություններից առաջ նա մեր միտինգներում միշտ գործադուլավորների կողմն եր պաշտպանում։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Նրանք ընտրություններից առաջ միշտ էլ պաշտպանում են։

ՖՐԱՆՑ. Իսկ յես, ընկերներ, պնդում եմ, վոր մենք նպաստ կըստանանք։ Նախ նա մեզ, վորպես բանվորների, չի մերժի, իսկ յերկրորդը՝ նա համենայն դեպս իմ ծանոթն է։



1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Ո՞վ գիտե...

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Քո ծանոթն է. վորտե՞ղից, ինչ՞ կերպ։

ՖՐԱՆՑ. շատ հասարակ։ Մենք մի ժամանակ նրա հետ միասին աշխատել ենք տրամվայի պարկում և կտեսնեք, վոր նա ուրախությամբ կընդունի մեզ... Պատմենք միայն նրան մեր կարիքների մասին—և վերջացած է։

«Ժողովրդի բարեկամի» լույսը փոխադրվում է կաբինետի վրա)

ԳԵԼԼ. (հերթապահին), Հայտարարեք, վոր այսոր ընդունելություն չի լինելու։

ՀԵՐԹԱՊԱՀ. Լսում եմ, ձերդ պայծառափայլություն. (Անցնում է ընդունարան։ Լույսը իսկույն ուղղվում է ընդունարան պատգամավորներին). այսոր նորին պայծառափայլությունը վոչ վոքի չի ընդունելու։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Այ, տեսա՞ք, յես ձեզ չասացի՞։

ՖՐԱՆՑ. (Հերթապահին) Մեզ նորին պայծառափայլությունը պետք չե, մեզ պետք է պարոն Գելլը։

ՀԵՐԹԱՊԱՀ. Նորին պայծառափայլություն պարոն Գելլը կարգադրեց վոր վոչ վոքի չընդունել։

ՖՐԱՆՑ (ցրված) Գե՞լլ և... նորին պայծառափայլություն։ Այստեղ ինչ վոր ուրիշ բան կա, թույլ տվեք, յես նրա հետ անձամբ կըխոսեմ։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Զարժե, Ֆրանց։

ՖՐԱՆՑ. Վոչ, յես պետք է տեսնեմ Գելլին։

(Դիմում է դեպի դուռը)

ՀԵՐԹԱՊԱՀ. Յես ձեզ նորին պայծառափայլության մոտ չեմ կարող թողնել։ (Կողմ), առանց կրկնակոշիկի գալիս են ու կեղտոտում...

ՖՐԱՆՑ. Յեթե դուք չեք կարող ինձ նորին պայծառափայլության մոտ թողնել, ապա խնդրում եմ հայտնեք նրան, վոր յեկել է Ֆրանցը. նա գիտե։

ՀԵՐԹԱՊԱՀ. Միևնույնն է։

ՖՐԱՆՑ. Վո՞նց թե միևնույնն է, ասեք վոր յեկել է նրա ընկեր Ֆրանցը։

ՀԵՐԹԱՊԱՀ. Տարորինակ է... (Գնում է զեկուցելու, բայց դեռ բերանը չբացած, Գելլի արած նշանից հետ է դառնում. պատգամավորներին) Նորին պայծառափայլությունը գնացել է։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Գնանք, ընկերներ... (դիմում է դեպի յելքի դուռը)։

ԳՆԴԱՊԵՏ. (մտնում է). Նորին պայծառափայլությունը այստեղ է։

ԳՆԴԱՊԵՏ. Հայտնեցեք.

*Դեղին լույսը մարում է: Հերթապահը արագ անցնում է կաբինետ գնդապետի այցետոմսը մատուցարանի վրա:*

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Տե՞սար, Ֆրանց:

ՖՐԱՆՑ. Չի կարող պատահել... Նա սխալվեց.., Նա հիմա նրան կասի, որ Գելբը գնացել է:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Ո՞վ գիտե.

ԳՆԴԱՊԵՏ. (Դիտելով պատգամավորներին) Հը՞մ...

ԳԵԼԲ. (Հերթապահին) խնդրեցեք:

ՀԵՐԹԱՊԱՀ. Պարոն գնդապետ, ձեզ խնդրում է Նորին պայծառափայլությունը:

ՖՐԱՆՑ (գրգռված). Մինչև չտեսնեմ Գելբին, այստեղից հեռացողը չեմ. (վճռականորեն նստում է):

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Հիմար.

1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Ո՞վ գիտե:

*Լույսը ընկնում է կաբինետի վրա.*

ԳՆԴԱՊԵՏ. Ձեր պայծառափայլություն, ստիպված եմ գանգատվել պրեզիդենտին:

ԳԵԼԲ. Ոչ մի պրեզիդենտ չի կարող ճնշում գործ դնել իմ կուսակցական խղճի վրա...

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ». Ուշադրություն դարձրեք, ինչպիսի հաստատուն քաղաքական համոզմունքներ:

ԳԵԼԲ. դուք գնդապետ, մի մոռանաք, որ ես սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ եմ:

*Լույսը ընկնում է կաբինետի վրա:*

ՀԵՐԹԱՊԱՀ. Ես ուղղակի զարմանում եմ, ձերդ պայծառափայլություն, ինչո՞ւ դուք չեք ուզում թույլատրել մեզ այդպես անմեղ չնչին բան:

ԳԵԼԲ. Ես ձեզ արդեն բոլոր չնչին ու անմեղ բաները թույլատրել եմ: Թույլատրել եմ ձեր ֆաշիստական «պողպատյա սաղը» կազմակերպության դուրս գալ փողոց Մայիսի մեկին: Թույլատրել եմ ձեզ ունենալ պահված զենք... Բայց տարբերվող ժապավեն թևի վրա ես չեմ կարող թույլատրել. այն դեպքում կմեղադրեն ինձ կողմնապահության մեջ դեպի ֆաշիստները:

*Ընդունարան է մտնում աղախինը մատուցարանի վրա բերելով նախաճաշ: Լույսը ընդունարանի վրա:*

ՖՐԱՆՑ (Հերթապահին). Ինչպե՞ս չեք ամաչում, չէ որ դուք ասացիք, որ Գելբը գնացել է, մինչդեռ նա նոր է սկսում նախաճաշը:



ՀԵՐԹԱՊԱՀ. Ես ասացի, որ Նորին պայծառափայլությունը գնացել է — ձ՛եզ համար միայն:

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ». (Հանդիսատեսներին) Ուշադրություն դարձրեք — «ձեզ համար միայն» սոցիալ-դեմոկրատները, բանվորների համար գնում են, ուր ուզես, հաշվի չառնելով տարածությունը:

ՖՐԱՆՑ. Ես հիմա Գելբի հետ կնախաճաշեմ. (մատուցարանի վրայից վերցնում է մի բուտերբրոդ) կասեք Գելբին, որ մի բուտերբրոդ վերցրել է Ֆրանցը... (ուտում է) Այ խսկական բուտերբրոդ (ընկերներին առաջարկելով) ուզո՞ւմ եք).

ՀԵՐԹԱՊԱՀ. Նորին պայծառափայլության բուտերբրոդն անմիջապես դրեք տեղը:

ՖՐԱՆՑ. Ես կեսը արդեն կերա:

*Լույսը կաբինետի վրա:*

ԳՆԴԱՊԵՏ. Իսկ ինչպե՞ս մերոնք պիտի տարբերվեն դեմոնստրանտների ամբոխի մեջ առանց այդ ժապավենների:

ԳԵԼԲ. Ինչպես ուզում եք... սակայն առաջարկում եմ կոճակներ մեջ ծաղիկներ ունենալ... Կրկնում եմ առաջարկում եմ և ոչ թե հրամայում:

ԳՆԴԱՊԵՏ. Շնորհակալ եմ ձերդ, պայծառափայլություն:

ԳԵԼԲ. Գնաք բարև (վերցնում է հեռախոսի փողը)

*Գնդապետը դուրս գնալիս ընդհարվում է աղախնու հետ:*

ԳԵԼԲ (խոսում է). Աննա, դու պատրա՞ստ ես... լավ, լավ... հիմա գալիս եմ... (աղախնին) ես այսօր նախաճաշելու չեմ տանը (գնում է դեպի դուռը):

*Լույսը ընդունարանի վրա:*

ՖՐԱՆՑ. (Գնդապետի գնալուց հետո փորձում է հերթապահին հեռացնել դռան միջից) — Ես պետք է տեսնեմ նրան:

ԳԵԼԲ. (Դուրս գալով) ո՞վ է այս:

ՀԵՐԹԱՊԱՀ. պատգամավոր գործադուլկներից, ձերդ պայծառափայլություն:

ԳԵԼԲ. Ախ, այդ գործադուլկները են... (դառնալով պատգամավորության) դժբախտաբար ես հիմա ժամանակ... ...Ես գնում եմ:

ՖՐԱՆՑ (Մոտենալով նրան) Սպասիր... սպասիր,.. չե՞ս ճանաչում, բարեվ, Գելբ:

ԳԵԼԲ. Հը՛մ ոչ, ինչ որ չեմ մտաբերում:

ՖՐԱՆՑ. Ֆրանցն եմ տրամվայի պարկից...

ԳԵԼԲ (վճռականորեն) Ո՛չ.

ՖՐԱՆՑ Ինչպե՞ս.

1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. (Գելբին) Կարո՞ղ եք մի քանի րոպե համ

ԳԵԼԲ (նայելով ժամացույցին)․ Միայն շուտ…

1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ (պատգամավորուհուն)․ Խոսիր դու…

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ․ Մենք գործազուրկներից պատգամավոր ենք յեկած, արդեն յերկու ամիս է, ինչ մեզ վոչ մի նպաստ չեն տալիս․ վոչ ուտելիք ունենք, վոչ էլ տեղ ապրելու։ Որեցոր շատանում է գործազուրկների թիվը։ Մենք իմացել ենք, վոր դուք յերեկ սոցիալ-դեմոկրատների կողմից քվեարկել եք գործազուրկների ապահովագրական վարկի պակասեցման համար։ Յեթե դուք մեզ աշխատանք չեք տալիս, գոնե տվեք հաց։

ԳԵԼԲ. Ընկերներ, գործազրկության խնդիրը շատ բարդ խնդիր է։ Մենք ձեր շահերից յելնելով եյինք քվեարկում վարկի պակասեցման համար… Վարկ ստանալիս, դուք ձեզ ապահով եք զգում և հետեվապես ձեր մեջ աշխատանք գտնելու ցանկությունը պակասում է. ինչքան քիչ ուտեք, այնքան շուտ աշխատանք կգտնեք։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. (կտրուկ) Ուրեմն այս հարցի վերաքննումից դուք հրաժարվում եք… Մենք այդպես էլ կհայտնենք։

ԳԵԼԲ. Թանգակին ընկերներ, յեթե այդ սպառնալիք է, ձեզ մոտ պահեք։ Յես ձեզ հետ կխոսեմ վորպես պետության ներկայացուցիչ, պետություն, վոր ձեզ լիովին ընդառաջ է գնում։

1-ԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Ո՞վ է իմանում…

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Բայց և այնպես դուք մեզ մերժեցիք։

ԳԵԼԲ. Յես չեմ մերժում, բայց և չեմ խոստանում։ Յես կարծում եմ, վոր յերկու շաբաթից այդ հարցը իր վերջնական լուծումը կստանա։ Յես կանեմ այն բոլորը, ինչ կախված է ինձնից։ Ցտեսություն (գնում է)։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Յես չասացի՞, վոր սրանից վոչինչ չի դուրս գալու, հետեվապես պետք չէր և գալ։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ (Ֆրանցին) իսկ դու, Ֆրանց, յերևի շատ ես ջանացել, վոր հին ծանոթդ անգամ քեզ չճանաչեց…

ՖՐԱՆՑ. (ցրված) Այո… այո… իսկապես… այդ ինչպես, յես միանգամից գլխի չընկա… իհարկե… իհարկե… յես փոխվել եմ… յես կրկին կգամ նրա մոտ… յես համոզված եմ, վոր նա մեզ կօգնի։

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ». Միայն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն է, վոր օգնում է պրոլետարիատին գնալու դեպի փայլուն ապագան…

ՀԵՐԹԱՊԱՀ (Ֆրանցին խոզանակ է տալիս). Վերցրու ահա այս խոզանակը և մաքրիր հատակը… այստեղ լակեյներ չկան…

ՎԱՐԱԳՈՒՅՐ



«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ» (Լապտերի մոտ). Միայն կույրը չի կարող տեսնել, վոր նպաստի խնդիրը, Գելբի ընդունելությունից հետո, անպայմանորեն պիտի լուծվի հօգուտ գործազուրկների (մարելով լապտերը գնում է)։

Մյուս կողմից, նույնպես լապտերով, հայտնվում է «Դրոշակը»։

ԴՐՈՇԱԿ. … Միայն կույրը չի կարող նկատել, վոր պրոլետարիատը յերես առ յերես ընդհարվելով, իշխանության գլուխը կանգնած սոցիալ-դեմոկրատների հետ, անպայմանորեն կըմբռնի, վոր իրենց ուղիները բաժանվում են և կարող են հանդիպել միայն բարրիկադների վրա (բեմը լուսավորում է կարմիր լույսով)։

Բեմը ներկայացնում է Գել՛բի հյուրասենյակը։ Գել՛բը նստած է բազկաթոռին։ Նրա առաջն է Մորիցը, իրա տղան, բոյսկաուտական համազգեստով։

ԳԵԼ՛Բ. Ի՞նչ նորություն կա քո բոյսկաուտական վաշտում, Մորից։

ՄՈՐԻՑ. Վաշտը ինձ վշտացնում է, հայրիկ։

ԳԵԼ՛Բ. Վշտացնո՞ւմ է, ինչո՞վ Մորից, չէ՞ վոր դու վաշտի պետն ես։

ՄՈՐԻՑ. Նրանք ինձ չեն լսում, հայրիկ։

ԳԵԼ՛Բ. Սկաուտները չե՞ն լսում։ Ամեն մի սկաուտ պետք է գիտենա, վոր նա հանդիսանում է մեր փոխարինողը և վոր կարգապահությունը պետք է առաջնակարգ տեղը գրավի։ Նրանք այդ բաները գիտե՞ն, Մորից։

ՄՈՐԻՑ. Գիտեք, հայրիկ։

ԳԵԼ՛Բ. (խիստ), Յեվ ի՞նչ։

ՄՈՐԻՑ. Բայց և այնպես սկաուտներից մի քանիսը անցան պիոներների կողմը, հայրիկ…

ԳԵԼ՛Բ. Անցան պիոներների կո՞ղմը (բլոկնոտը հանելով) «փակել»…

ՄՈՐԻՑ. Ի՞նչը փակել, հայրիկ։

ԳԵԼ՛Բ. Յես այնպես, հիշողության համար գրեցի, վորպեսզի չըմոռանամ բոլոր պիոներական լագերները փակելու մասին կարգադրություն անել։

ՄՈՐԻՑ. Այ, այդ լավ կլինի, հայրիկ։

«ԴՐՈՇԱԿ». Սոցիալ-ֆաշիստների տակտիկան է՝ արգելելով հեղափոխական յերիտասարդության բոլոր կազմակերպությունները, պատրաստել իրենց փոխարինող ֆաշիստներ։

ԳԵԼԲ. Իսկ վաշտում քո հեղինակությունը բարձրացնելու համար, դու հայտարարիր սկաուտներին, վոր յես սկաուտական վաշտին նըվիրում եմ տպագրական մեքենա. վաշտը կհրատարակի իր սեփական թերթը իհարկե իմ գաղափարական ղեկավարությամբ։

ՄՈՐԻՑ. (Ուրախ) Շնորհակալ եմ, հայրիկ… Մենք մեր թերթը կանվանենք «Յեղիր պատրաստ»։

ԳԵԼ'Բ. Ինչ՞, ինչ՞պես ասացիր, Մորից։

ՄՈՐԻՑ. «Ցեղ՛իր պատրաստ»։

ԳԵԼԲ. Այո, մենք նրան կանվանենք... «Ցեղի՛ր պատրաստ... կարմիր վտանգի դեմ կռվելու»։

«ԴՐՈՇԱԿ. Սոցիալ-ֆաշիստները իրենց ապականիչ ազդեցությունը պատանեկության վրա իրագործում են ամեն տեսակի միջոցներով... Գելբե՛րը ճգնում են, վորպեսզի պատանեկական թերթերը «Ժողովրդի բարեկամ» լրագրի արժանի ժառանգները դառնան։

ԳԵԼ'Բ. Հիշեցու ինձ, Մորից, ձեր սկաուտական յերգի բովանդակությունը։ Գուցե նա կարիք է զգում գաղափարական ուղղումների...

ՄՈՐԻՑ. Հիմա, հայրիկ (հանելով թուղթը) մեր յերգը միշտել պետք է լինի ամեն մի սկաուտի մոտ։ (տալիս է հորը, ապա յերգում)՝

Առավոտ ծեգին կզարթնենք
Ու արշավի կելնենք քաջ.
Միահամուռ խմբով յերգ կհնչենք,
Հեյ, բոյսկաուտներ, առա՛ջ։

Մենք ազատ զբոսանքի կելնենք,
Խարույկների շուրջ կնստենք,
Թե կամուրջն է կոտրած՝ կշինենք,
Ծերերին հանդիպելիս՝ կոգնենք։

Յերբ յերեկոյան արեը մայր մտնի
Յեվ աշխարհին տիրի խոր լռությունը,
Մեզնից միայն մեկը պահակ կկանգնի
Պահպանելու մյուսների խաղաղ քունը։

ԳԵԼ'Բ. Սպասիր, Մորից... դուք յերգում եք... «Ու արշավի կելնենք քաջ...». Բայց ում դեմ, այստեղ վոչինչ չի ասված։

ՄՈՐԻՑ. Սկաուտական արշավի, հայրիկ, դեպի խարույկները։

ԳԵԼ'Բ. (Յերգի տեկստը մատիտով ուղղում է)։ Վոչ, այդ պետք է պարզել...

Մենք արշավի կելնենք քաջ
Մեր թշնամիների դեմ.
Հեյ, բոյսկաուտներ, առա՛ջ...

ՄՈՐԻՑ. Լսում եմ, հայրիկ...

ԳԵԼ'Բ (շարունակում է ուղղելը). «Մենք ազատ զբոսանքի կելնենք...» Ինչ՞ ազատության մասին է ձեր խոսքը։ Գրիր՝ «Մենք դաշտում, դաշտում կզբոսնենք։»



(ԿԱՐԴՈՒՄ Է)

Խարույկների շուրջ կնստենք,
Թե կամուրջն է կոտրած՝ կշինենք,
Ծերերին հանդիպելիս՝ կոգնենք...

Կամուրջներ շինել-ձեր գործը չէ, Մորից... Դրա համար ինժեներներ կան (գրում է ձայնակցելով) կամուրջներ շինելը-մեր գործը չէ։ Մենք սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոգնենք։

ՄՈՐԻՑ. Այդ մեր յեղանակին չի գալիս, հայրիկ...

ԳԵԼ'Բ. Ի՞նչպես թե չի գալիս, ցանկության դեպքում կարելի յե։

Մենք դաշտում, դաշտում կզբոսնենք,
Խարույկների շուրջ կնստենք,
Կամուրջներ շինելը-մեր գործը չէ.

Մենք սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոգնենք
Հը՜մ... հա, դեհ վոչինչ, առայժմ այդպես յերգեցեք։

ՄՈՐԻՑ. Լավ, հայրիկ, հետո մենք «սոցիալ-դեմոկրատականը» կփոխարինենք...

«ԴՐՈՇԱԿ». Հանգիստ յեղեք...

ԳԵԼԲ. ինչպես թե կփոխարինենք։ Այդ կուսակցությունը անփոխարինելի յե, Մորից։

«ԴՐՈՇԱԿ». Միայն բուրժուազիայի համար։

Մտնում է Վեյսը, Մորիցը նրան վողջունում է։

ՎԵՅՍ (բարեվելով). Ձերդ պայծառափայլություն...

ԳԵԼԲ. (վորդուն) Մորից, գնա դու քո սենյակը։ (Վեյսին բարեվելով), դուք, Վեյս, կարող եյիք այստեղ ինձ այդպես չանվանել։ Սոցիալիստին տանը պայծառափայլությամբ այդ անհարմար է... Ջե՞վոր մենք համենայն դեպս միևնույն կուսակցության անդամներ ենք։

ՎԵՅՍ (ուշադրություն չդարձնելով). Այսոր յես շատ կարեվոր հաղորդություններ ունեմ։

ԳԵԼԲ. ինչ կա։

ՎԵՅՍ. Վոստիկանությունը արդեն ստույգ տեղեկություններ ունի, վոր չնայած պաշտոնական արգելման, պատրաստվում են մասսայական ցույցեր վարել, ուզում են ամբողջությամբ մասնակցել նաև գործազուրկները։

ԳԵԼԲ. Ինչպե՞ս թե գործազուրկները։ Հենց յերեկ ինձ մոտ եր նրանց պատգամավորությունը, և ինձ թվում է, վոր մենք համաձայնության յեկանք։

ՎԵՅՍ. Ինչպես յերևում է, այդպես չի։ Թեև մեր թանկագին «Ժողովրդի բարեկամը» բարեխղճորեն չափազանցրել է... այնուամե-

նայնիվ այդ անհրաժեշտ տպավորությունն չթողեց, և ինձ թվում է, որ նրանց մեծ մասը դուրս կգա փողոց։

ԳԵԼԲ. Յես, իհարկե, հիմնականում դրան հակառակ չեմ, բայց չէ՞ որ դա առիթ կտա «Դրոշակ» թերթին նորից մեզ մեղադրելու, որ մենք խաղաղ ցույցին դիմավորում ենք կրակով։

ՎԵՅՍ. Ինչ վերաբերում է ցույցի խաղաղ լինելուն, մենք միշտ էլ հնարավորություն ունենք ապացուցել և հաստատել, որ գործավորները զինված էյին, և մեզ հեշտ կլինի թափված արյան մեղավորությունը գցել կոմունիստների վրա... Չէ՞ որ ցույցերը պաշտոնապես արգելել ենք։

ԳԵԼԲ. (Վոգեվորվելով) դուք իրավացի յեք և բացի դրանից, այդ մեզ առիթ կտա ավելի վճռական պայքար մղելու կարմիր վտանգի դեմ։

ՎԵՅՍ. Այս բոլորը այսպես, բայց լավ կլիներ, յեթե նրանց թիվը պակասեցնեյինք գոնե գործավորների հաշվին... դուք ձեր ձեռքի տակ համապատասխան միջոցառումներ չունի՞ք արդյոք։

ԳԵԼԲ. Միակ միջոցն այն է, որ ցույցի որն անհրաժեշտ կլինի գանձարկղները բանալ և գործավորներին նպաստ տալ, մի բան, որ մենք արդեն մի ամիս է ձգձգում ենք։

ՎԵՅՍ. Հիանալի միտք... դա, անպայման կքայքայի գործավորների շարքերը։

ԳԵԼԲ. Չեմ կասկածում։ Չէ՞ որ քաղցած մարդը միշտ կգերադասի իր ազատ ժամանակն օգտագործել նպաստ ստանալու համար, քան թե ձրի փողոցները շրջել։

ՎԵՅՍ. Յեվ ճակատները գնդակների դեմ բռնել։

ԳԵԼԲ. Հա, հա, հա, հա։ Թույլ տվեք համբուրել, ձերդ պայծառափայլություն. դուք ինձ իսկույն հասկանում եք (համբուռվում են)։

«ԴՐՈՇԱԿ». Սրտառուչ միություն։ Սոցիալ-դեմոկրատները միշտ պաշտպանում են պրոլետարիատի նյութական շահերը...

«ԴՐՈՇԱԿԻ» վերջին խոսքերից հետո իսկույն հայտնվում է «Ժողովրդի բարեկամը», վորը սկզբում չի նկատում կարմիր լույսը։

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ» (հանդիսատեսներին). Այսօրվանից սկսած մենք մեր լրագրի էջերում մանրամասն լուսաբանելու յենք այն պայքարը, որ սկսել են սոցիալ—դեմոկրատները գործավորներին տրվելիք նպաստի նվազեցման օրինագծի դեմ... (կարմիր լույսը նկատելով), ո՞վ է այստեղ լուսավորողը, «Դրոշակը»: Ո՞վ ձեզ թույլատրեց լուսավորելու, փակեցեք վարագույրը (վարագույրը փակվում է)։ Յես պահանջում եմ, որպեսզի դուք վերջ տաք մեր ներքին գործերին խառնվելուն։

«ԴՐՈՇԱԿ». Այդ ներքին գործեր չեն, այլ բանվոր դասակարգի շահերի դավաճանում (ուզում է վարագույրը բացել)։



«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ». (Հանելով վոստիկանական սուլոցը, սուլում է, իսկույն գալիս են յերկու վոստիկան)։
Վերցրեք սրան, խլեք լապտերը ու փակեք բերանը։

«ԴՐՈՇԱԿ». ընկերներ.., (վոստիկանները նրան տանում են)։

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄԸ» բեմի վրա բացում է լրագրի մեծածավալ համար։

«ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄ». կարդացեք մեր լրագրի արտակարգ համարը։

Համարի մի անկյունում հայտնվում է 1-ին գլուխը։

1-ԻՆ ՁԱՅՆ. Ուշադրություն... բանվոր դասակարգի թշնամի կոմունիստները, իհարկե Մոսկվայի հրամանով, խրախուսում են մեր պրոլետարիատին մասնակցելու մասսայական ցույցերին։ Չենթարկվեք պետության թշնամիների պրովակացիաներին (անհայտանում է)։

2-ՐԴ ՁԱՅՆ (հայտնվում է յրագրով). Ուշադրություն, այսօր փակվեց կոմունիստական «Դրոշակ» լրագրի խմբագրությունը և ձրավված են այսօրվա բոլոր համարները, մեր սիրելի առաջնորդ Գելբի դեմ զրպարտելու համար։ Խմբագիրը ձերբակալված է։ Մենք պահանջում ենք դատարանից այդ անպատկառ զրպարտիչի վերաբերյալ խիստ դատավճիռ (պահվում է)։

3-ՐԴ ՁԱՅՆ (հայտնվելով). Ուշադրություն... սոցիալ—դեմոկրատական ֆրակցիային հաջողվեց պաշտպանել ու անցկացնել գործազրկության ապ ահովագրական նպաստները։ Սոցիալ—դեմոկրատական կուսակցությունը հավատարիմ է պրոլետարիատի շահերին... (անհայտանում է)

4-ՐԴ ՁԱՅՆ· (Հայտնվելով). Ուշադրություն... Այսօր առավոտյան ժամը 10-ին բացվում են գործազուրկներին նպաստ տալու կայանները. պատահաբար կայանների բացման ժամանակը զուգադիպեց փողոցային ցույցերի ժամանակի հետ։ Մենք կոչ ենք անում խելացի ընկերներին առաջին հերթին օգտվել նպաստ ստանալու հնարավորությունից։ Կորչեն փողոցային միտինգները... կեցցեն գանձարկղների մոտի հերթերը... Կեցցե սոցիալ—դեմոկրատական կուսակցությանը։

Կուլիսների հետևից լսվում է դանդաղ մոտեցող դեմոնստրանտների յերգը նրանց առաջնորդում է Ֆրանցը։ Յերգել կամ «Ինտերնացիոնալ», կամ վորևե համապատասխան հեղափոխական յերգ։

Համազարկ։ Ֆրանցը ընկնում է։

Դեմոնստրանտները սեղմվում են «Ժողովրդի բարեկամ» լրագրի թերթին՝ բարեկամի կազմելով։

ՖՐԱՆՑ. ո՞վ կրակեց։
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻ. Գելբը, Ֆրանց։

Բեմը մի րոպե մթնում է։ Բեմը լուսավորվում է ուժեղ լույսով, հայտնվում է «Դրոշակը», և պատռում է «Ժողովրդի բարեկամ» լրագրի համարը, որի հետևը պահվել եր կրակողների զինված խումբը—գնդապետը, Վեյսը, Գելըը և բոլորն։

«ԴՐՈՇԱԿ». պրոլետարիատը պարտական է ճանաչելու իր մարդասպաններին։

Թարգմ. Ն. ԱՄԱՏՈՒՆԻ

## ՎԱՐԱԳՈՒՅՐ

---

ԾԱՆՈԹՈՒԹ. «Դրոշակի» և «Ժողովրդի բարեկամ»-ի խմբագիրները միշտ գտնվում են ավանսցենի վրա։



# ՊԱՅՔԱՐ

### ՊՅԵՍԱ 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ, ՅԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐՈՎ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ՀԱՆՍ ԲՐԵԽԵՐ—բանվոր, ամուր և հաղթանդամ կազմվածքով.
2. ՄԱՐԹԱ—Նրա կինը.
3. ՖՐԻՑ—Նրանց վորդին, ժիր տղա
4. ՇՏՈՒՐՄ—բանվոր.
5. ՊՈՒՊՊԵ—Սոցիալ-դեմոկրատ.
6. ՊԱՍՏՈՐ.
7. ՐՅՈՒԲԵ—վոստիկան, փոքրահասակ, հաստ, խիտ ու չեկ բեխերով.
8. ԳՈՒՐԿԵ—Վոստիկան, նիհար և յերկարահասակ.
9. ՄԻ ՏԻԿԻՆ.
10. ՆՐԱ ԿԱՎԱԼԵՐԸ.
11. ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ
12. ԱՆՑՈՐԴ

### 1-ԻՆ ՊԱՏԿԵՐ

*Փողոց. 1929 թ Մայիսի 1-ին։ Պատ, պատուհաններ, լապտեր։ Պատի վրա վոստիկանության հեռախոսի յերկաթե արկղը։ Րյուբեն ձեռները հետևը դրած հանդարտ ման է գալիս մայթի վրա։ Գոտուց կախած է ատրճանակի պատյանի հետ միասին նաև յերկու քիմիական ռումբ։*

ՐՅՈՒԲԵ (նայելով ժամացույցին). ժամը յոթն է։ Դեռ յերկու ժամ կարելի յե հանգիստ մնալ։ Այնպես շուտ նրանք ցույցըչեն սկսի։ Ախ, այդ ինչ հիմար բանաստեղծ է, վոր ասել է «մայիսը ուրախ ամիս է»։ Նա յերևի վոստիկանության մեջ չի ծառայել։ Սատանան տանի այդ մայիսը. նա միշտ այսպես վատ է սկսվում... (Լսվում է պահակատեղի հեռախոսի զանգի ձայնը։ Րյուբեն մոտենում է հեռախոսի արկղին, բաց է անում այն ու առնում լսափողը)։

ՐՅՈՒԲԵ. Պահակատեղ 897, յես եմ, վոստիկան Րյուբեն։ Ի՞նչպես (խոսում է լսափողով)։ Ախ, այդ դո՞ւք եք, պարոն վոստիկանապետ... լսում եմ։ Ամեն ինչ կարգին է, դեռ վոչինչ չի սկսվել... վորտե՞ղ. նկուղ ումն. գործադուլային կոմիտե։ Լավ, կձերբակալենք։ Ծծմբաջրածին։

Ճիշտ այդպես… ունենք (շոշափում է գոտուց կախված ռումբը). արցունքաբեր գազ, այս ունենք… աա… քաշ տալ … չթողնե՞լ… բռնե՞լ… հարձակվե՞լ… փակե՞լ… ձերբակալե՞լ… նստեցնե՞լ… լսում եմ (կախում է լսափողը յեվ փակում արկղը)։ Ֆու… (սրբում է ճակատի քրտինքը)։ Յերբ խոսում ես Նորին պայծառափայլության վոստիկանապետի հետ, ակամա քրտնում ես։ (Ականջ է դնում)։ Մեկը գալիս է (շոշափում է ատրճանակի պատյանը)։

*Ձախից մտնում է Գուրկեն*

ՐՅՈՒԲԵ. Այդ դո՞ւ յես, Գուրկե… բարի՛ լույս։

ԳՈՒՐԿԵ. Բարի լույս. հիանալի յեղանակ է։

ՐՅՈՒԲԵ. Դժբախտաբար այսօր հիանալի յեղանակ է։։ Յես կգերադասեյի, վոր մայիսի մեկին վատ յեղանակ լիներ։ Գուցե այն ժամանակ բանվորները ցույցի դուրս չգային։

ԳՈՒՐԿԵ. Իսկ օգոստոսի 1-ի՞ն։

ՐՅՈՒԲԵ. Օգոստոսի 1-ին էլ։

ԳՈՒՐԿԵ. Իսկ մարտի 8-ի՞ն։

ՐՅՈՒԲԵ. Մարտի 8-ին էլ նույնպես։ Ե՜հ սատանան տանի, թեկուզ ամբողջ տարին այդպես ցեխ, քամի, հողմ, ցուրտ, ձյուն, անձրև փոշի լիներ, վորպեսզի վոչ մի ցույց չկատարվեր…՛ Քիչ առաջ զանգահարում եր Նորին պայծառափայլությունը։ Նա տեղեկացավ, թե արդյոք բոլորի՞ն են նոր ռումբեր ցրել (ցնցում է նրան) բարեգութ աստված։ Դու չես ստացել։

ԳՈՒՐԿԵ. Վոչ, իսկ այդ ի՞նչ ռումբեր են։

ՐՅՈՒԲԵ. Օ, դա մեր հանճարեղ պետի նոր գյուտն է։ Ահա։ (դուրս է հանում գրպանից մի փունջ յեվ մի մեծ շպրից)։ Յես համենայն դեպս յերկու ավելորդ ռումբ վերցրի (ցույց է տալիս շպրիցը)։ Կդնես ուղածդ ճեղքվածքի մեջ, կսեղմես խցանը և գազը բաց կթողնես շենքի մեջ։ Բոլորը կսկսեն լաց լինել, վոչինչ չեն տեսնի, ու ցույցը խանգարված է։ Վոչ վոք փողոց չի դուրս գա. տեսողությունն էլ կխանգարվի մի ամբողջ օրով։

ԳՈՒՐԿԵ. (Վերցնում է շպրիցը) Սատանան տանի։ Հանճարեղ գյուտ է։ (Շպրիցը կախում է իր գոտուց)։

ՐՅՈՒԲԵ Իսկ այս ծծմբաջրածնային ռումբ է։ Նետում են ամբոխի, կամ փակ շենքի մեջ, վորից արձակվում է խեղդիչ հոտ. դրանից բոլորը փախչում են։ Բռնի՛ր։

ԳՈՒՐԿԵ. (վերցնելով ռումբը) Ասում ես վա՞տ հոտ ունի (հոտոտում է) ճիշտ վոր զարշելի հոտ ունի։ Բայց վո՞րտեղ պահեմ ես նրան։

ՐՅՈՒԲԵ. Գրպանդ դի՛ր։

ԳՈՒՐԿԵ. Բայց գրպանումս մի կտոր յերշիկ կա։ Չէ՞ վոր նա կ…



ՐՅՈՒԲԵ. Այն ժամանակ հանիր յերշիկդ։

ԳՈՒՐԿԵ. Բայց, ախր հո չի կարելի ձեռքումդ յերշիկ բռնած պահակ կանգնել։

ՐՅՈՒԲԵ. Այն ժամանակ ձեռքումդ պահիր սա։ Ասենք ավելի լավ է ձեռքումդ ունենալ յերշիկը։

ԳՈՒՐԿԵ. Այսինքն դու ուզում ես ասել-ռո՞ւմբը։

ՐՅՈՒԲԵ. Ֆու, սատանան տանի… իհարկե ռումբը։

ԳՈՒՐԿԵ. Հը՜մ… (Ինչ վոր բաներ է տեղավորում գրպաններում)

*Ձախից մտնում են գործարանապետը և պաստորը խոսելով իրար հետ*

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Վոչինչ չի կարող պատահել։ Մենք նրանց այնպես հուպ տվինք, վոր նրանք այլևս ձայն հանել չեն կարողանա։ Մենք նրանց չենք թողնի փողոց դուրս գալ։ (Երկուսն էլ ուզում են անցնել դեպի աջ)։

ՐՅՈՒԲԵ. (Կանգնեցնելով նրանց)։ Հետ, հարգելի պարոններ։ Այստեղ չի կարելի։

ՊԱՍՏՈՐ. Ինչո՞ւ, վորդիս։

ՐՅՈՒԲԵ. Վոստիկանական նախագահության վորոշումն է այդ։ Ձեզ պետք կլինի սպասել։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Բայց բանն ինչո՞ւմն է։

ՐՅՈՒԲԵ. Պարոն Պֆեֆֆենկոֆերի բանվորները պիտի յերեան այն կողմից։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Սատանան տանի։ Սակայն յես ինքս Պֆեֆֆենկոֆերն եմ։

ԳՈՒՐԿԵ ՅԵՎ ՐՅՈՒԲԵ. (պատիվ են տալիս)։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Անպիտաններ, բայց և այնպես նրանք համարձակվում են փողոց դուրս գա՞լ։

ՊԱՍՏՈՐ. Զարմանալի յե։ Ինչ են մտածում մեր ռեֆորմիստական արհմիությունները։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Ախ այդ ձրիակերներին նույնպես պետք է մի լավ դաս տալ։ Նրանք լավ ճառել միայն գիտեն, իսկ նրանց փոխարեն պիտի աշխատի վոստիկանությունը…

ՊԱՍՏՈՐ. Փառք աստծո, վոստիկանության կարելի յե վստահել։

ՐՅՈՒԲԵ ՅԵՎ ԳՈՒՐԿԵ. (Պատիվ են տալիս)։

ՊԱՍՏՈՐ. Ձեր պետը-ձեր պահապան հրեշտակն է. դուք գիտե՞ք նրա ծրագիրը։ Այսօր փոքր քաղաքներից և ավանաններից, վորտեղ չկան գործարաններ, մայրաքաղաք է հավաքված վոստիկանությունը։ 15 հազար վոստիկան. դա մեծ ուժ է։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Դա հսկայական ուժ է։

ՊԱՍՏՈՐ. Վերջին շաբաթվա ընթացքում մայիսի 1-ի առիթով ձերբակալված է 4000 հոգի։

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Դա ահագին բան է:

ՊԱՍՏՈՐ. Բացի այդ, այսօր նա ձեռք կառնի նրանց դեմ փոքրիկ պրովակացիա: Սատանան գայթակղեցնում էր փրկչին, ցույց տալով նրան քաղաքը: Նա յել պիտի նույնը անի: Յեթե բանվորական թաղամասերից նրանք քաղաք խուժեն, վոստիկանապետը պիտի գայթակղի նրանց բարիկադներ կազմելու...

*Աջ կողմից յերևում է մի անցորդ: Կանգ է առնում, ականջ է դնում մի րոպեյով: Ռյուբենն աննկատելի շարժում է անում, անցորդը անհետանում է:*

ՊԱՍՏՈՐ (Զրնգհացնելով իր խոսքը)՝ Պիտի գայթակղի, մի փոքր սանձարձակություն... Յեթե նրանք վոչնչացնեն պարտեզներում սիգամարգերն անգամ, այդ բավական կլինի, վորպեսզի գործի դրվեն գնդացիրները:

ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏ. Սիգամարգեր, շատ կարելի յե բավական են, բայց գնդացիրները բավական չեն նրանց համար, նրանց պետք է շների պես խեղդել: Նորից քշել, մտցնել նկուղները, սովատանջ անել:

*Խոսելով հեռանում են:*
*Ձախից յերևում է դեմքը խիտ շղարշով ծածկած մի տիկին իր կավալերի հետ:*

ՏԻԿԻՆ. Յեկել են, յես ձեզ ասում եմ յեկել են. յերեկ: Մորաքույր Շարլոտան տեսել է: Իսկական Կոմինտերնի ագենտներ, Մոսկվայից: Գազանային դեմքերով, կեղտոտ շորերով:

*Ձախից յերևում է անցորդը, մեծ կապույտ ակնոցներով:*

ԿԱՎԱԼԵՐ (Սարսափահար). Չի կարող պատահել.
ՏԻԿԻՆ. Վաղը և յեթ հեղափոխությունը կսկսի:
ԿԱՎԱԼԵՐ. (կանգնեցնելով նրան). Լսեցեք, տիկին Կունիգունդա, լավ չէ՞ լինի, վոր մենք...ը՛...ը՛...ը՛... վերադառնանք:
ՏԻԿԻՆ. Այսինքն, ինչպե՞ս թե վերադառնանք:
ԿԱՎԱԼԵՐ. Դուք տեսնո՞ւմ եք, այստեղ արդեն կանգնած է վոստիկան պահակը:
ՏԻԿԻՆ. Ի՞նչ կա վոր, վոստիկանությունը չի կարող ինձ արգելել ամուսնուս դավաճանել:
ԿԱՎԱԼԵՐ. Բայց այնտեղ մենք կարող ենք թակարդ ընկնել:
ՏԻԿԻՆ. Դուք վախկոտ եք: Դուք ուզում եք լինել աշխարհիկ կնոջ սիրահարը ու միևնույն ժամանակ այդպես վախենում եք վոստիկանությունից: Յես ձեր պատճառով տանից դուրս յեկա առավոտյան ժամը 7-ին, թողնելով ամուսնուս առանց սուրճի: Դուք ինձ հրավիրեցիք ձեզ մոտ, իսկ հիմա ինձ տուն եք ուղարկում: Յես այդպիսի բաներ հանդուրժել չեմ կարող: Տարեք ինձ ձեզ մոտ (բռնում է նրա ձեռքից) իսկույն: (Քաշում է նրան, իսկ նա անվճռական հետեվում է նրան:



ՌՅՈՒԲԵՆ (Փակելով նրա ճանապարհը). Տիկին, հետ վերադարձեք:
ՏԻԿԻՆ (Ապշած), Ինչպես թե հետ: Այսինքն ամուսնուս մո՞տ:
ՌՅՈՒԲԵՆ. Հետ:
ԿԱՎԱԼԵՐ (Տիկնոջ). Նա ամեն ինչ գիտե:
ՌՅՈՒԲԵՆ. Մայիսի մեկին վոստիկանությունը ամեն ինչ գիտի:
ԿԱՎԱԼԵՐ. Աղաչում եմ ձեզ, վերադարձեք: Պետք չէ խանգարել վոստիկանության կարգը, իսկ ձեր ամուսնուն, ինչ տարբերություն, կարող եք դավաճանել վաղն էլ...
ՏԻԿԻՆ. Վախկոտ (վոստիկանին) իսկ յե՞րբ կարելի կլինի անցնել:

*Գործարանատերը և պաստորը նորից յերևում են անկյունից և գալիս են դեպի ավանսցենա: Անցորդը անհետանում է:*

ՏԻԿԻՆ. (Ընկատելով գործարանատիրոջ) Ախ, սա իմ ամուսինն է...
ԿԱՎԱԼԵՐ. Յես կորա:
ՏԻԿԻՆ. Բայց վոչինչ: Շղարշի տակ նա ինձ չի ճանաչի:

*(Մի կողմ է հեռանում)*

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. (Գրգռված մոտենում է վոստիկանին յեվ ցույց է տալիս դեպի աջ) Արդեն գալիս է. գալիս է:
ՌՅՈՒԲԵՆ. Ո՞վ.
ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Մի բանվոր: Միջոցներ ձեռք առեք:

*(Բոլորը հուզվում են)*

ԿԱՎԱԼԵՐ. Զգույշ, սկսվում է.
ՊԱՍՏՈՐ. Վո՞րտեղ կարելի յե թագնվել:
ԳՈՒՐԿԵ. Այ այստեղ, փողոցի անկյունում. այստեղ, այստեղ.

*Պաստորը, տիկինը, կավալերը, գործարանատերը և նրանց հետևից Գուրկեն գնում են դեպի ձախ: Պաուզա: Ձախ կողմից յերևում է Հանս Բրեխերը: Ռյուբենն անշարժ մնում է յուր տեղում: Բրեխերը ուղղակի մոտենում է վոստիկանին և կանգ է առնում, ծխելով ուղղակի նրա քթի մոտ ծխամորճը: Ռյուբենն բարձր փռշտում է ու հեռանում Բրեխերից:*

ԲՐԵԽԵՐ (հանգիստ). Առողջություն:
ՌՅՈՒԲԵՆ. (Հազում է, դուրս հանելով թաշկինակը) Ֆու... Անեծք. Ֆու...
ԲՐԵԽԵՐ. (Նույն հանդարտությամբ) Թունդ կնեստր է, ճիշտ է չէ, (ծխի քուլա յե յեվս բաց թողնում):
ՌՅՈՒԲԵՆ. Վերջացրեք ծխել:
ԲՐԵԽԵՐ. Ա՛յ քեզ բան, ինչու:
ՌՅՈՒԲԵՆ. Այստեղ... Այստեղ... Այստեղ... փողոցը ծխողների համար չէ:
ԲՐԵԽԵՐ. Ոչի՞նչ, սա յել նոր օրենք է: (Ծխի նոր քուլաներ):

ՐՅՈՒԲԵ. Դուք փողոցում ծխելու համար յենթարկվում եք 10 մարկ տուգանքի։ (Դուրս է հանում ծխամորճը)։

ԲՐԵԽԵՐ. Վճարելու մասին յերբեք էլ չեմ մտածում:

ՐՅՈՒԲԵ. (Աչքերը չռելով) Ա-ա... Այդ դեպքում գնանք վոստիկանատուն։

ԲՐԵԽԵՐ (ձեռները գրպան դնելով) Չեմ էլ մտածում գնալ: Յես գերադասում եմ ազատ օդում ծխել։

ՐՅՈՒԲԵ. Գնա՛նք։

ԲՐԵԽԵՐ. Իսկ յեթե դուք գնաք, այն ժամանակ ով կկանգնի ձեր տեղը: Յերկու հարյուր հոգի Պֆեֆֆենկոֆերի գործարանից կանցնեն այստեղից ուղիղ դեպի հրապարակ։

ՐՅՈՒԲԵ. Մի՛ անհանգստանաք, չեն անցնի. վոստիկանությունը ամեն ինչ նախատեսել է, (կանչում է) Գուրկե, Գուրկե... Ապուշ. (Բրեխերին) դուք պարտական եք կանգնել այստեղ և տեղից չշարժվել։

ԲՐԵԽԵՐ. Կարող եմ ձեզ խոստանալ, վոր կմնամ այստեղ, ինչքան վոր ինձ պետք է (բաց է թողնում ծխի նոր քուլա)։

ՐՅՈՒԲԵ (զայրացած), Ֆու, սատանա՝ Գուրկե, Գուրկե (հեռանում է դեպի ձախ)։

ՇՏՈՒՐՄ (մտնելով աջ կողմից). Բարև Բրեխեր։

ԲՐԵԽԵՐ. Բարև Շտուրմ. յես քեզ այստեղ սպասում եյի, ինչպես վոր պայմանավորվել եյինք։

ՇՏՈՒՐՄ. Իսկ դու կարծեմ արդեն սկսել ես վոստիկան պահակներին գրգռե՞լ։

ԲՐԵԽԵՐ. Յես նրան այստեղից ծխախոտի ծուխով փախցրի։ Ահա այս ծխամորճով։

ՇՏՈՒՐՄ (կամաց). Խոլլե գործարանի բոլոր բանվորները ինչպես մի հոգի գործադուլ են հայտարարել։ Առավոտյան ժամը տասին ցուցարարների զորաշարքը կհավաքվի մետաղաձուլական գործարանի բակը։ Դարբասի բանալին ինձ մոտ է։ Ջերոնց ասա, վոր հետևակ և հեծելազոր զորաշղթայի ամենաուժեղ մասը գտնվում է պարտեզների և կայարանի կողմում։ Մենք կառաջանանք հարավից. այնտեղ ավելի հեշտ է վոստիկանության զորաշղթան ջարդել:

ԲՐԵԽԵՐ. Հիանալի յե:

ՇՏՈՒՐՄ. Ասա ձերոնց, վոր չխաբվեն վոստիկանության պրովոկացիայից։

ԲՐԵԽԵՐ. Այսոր ձեզ մոտ յեկա՞վ վորևե մեկը։

ՇՏՈՒՐՄ. Այո։ Այսոր մեր գործարանում յելույթ ունեցավ իր ճառից սոցիալ-դեմոկրատ Պուպպեն։ Նա կանչում էր բոլորին դեպի խաղաղություն։ Խաղաղություն արդյունաբերության մեջ։

ԲՐԵԽԵՐ. (Հեգնանքով) Յեվ հաջողություն ունեցա՞վ։



ՇՏՈՒՐՄ. Հաջողությունը՞ հռետորի համար, բոլորովին անսպասելի յեր, սկզբում նրան ումբակոծեցին կարտոֆիլի կճեպներով, իսկ հետո պատռեցին կոստյումը։ Յեվ մեր հռետորը փախավ։

ԲՐԵԽԵՐ. Նշանակում է ամեն ինչ կարգին է։

ՇՏՈՒՐՄ. Խոստանում եմ այսոր հարյուր հազար ցուցարարներ դուրս բերել։ Մեր բանվորները Մայիսմեկյան տոնակատարության օրը հեղափոխությունը չեն մոռանում։ Յեթե այսոր զոհեր լինեն, ապա նրանց արյան գնով պիտի ամրանա մեր միասնական ճակատը ընդեմ ձեռնարկողների յեռյակ միության, պետության և ռեֆորմիստների։ Կեցցե Մայիսի...

ԲՐԵԽԵՐ. Ս-Ս-Ս... Կամաց, մի վոգեվորվիր, այստեղ պատերն էլ ականջ ունեն։

Յերևում է անցորդը առանց ակնոցների, բայց ունի կեղծ ճերմակ յերկար մորուք։

ԱՆՑՈՐԴ (Մոտենալով բանվորներին). Ե՜... Ասացեք խնդրեմ... ժամը քանիսն է։

ՇՏՈՒՐՄ. Յոթ և կեսն է։

ԱՆՑՈՐԴ. Շնորհակալ եմ (Բրեխերին) Թույլ կտա՞ք ծխել։

ԲՐԵԽԵՐ. (Լուռ յեվ անհոգ մեկնում է ծխամորճը)։

ԱՆՑՈՐԴ. Ախ, ինչ հիանալի ծխամորճ ունեք։ Գիտե՞ք, յես ուզում եմ միանալ բանվորական դեմոկրատիային։ Դուք չգիտե՞ք վորտեղ են հավաքվում մերոնք։

ԲՐԵԽԵՐ. Դուք ինչպես յերևում է միանալու յեք շքերթի՞ն։

ԱՆՑՈՐԴ. (Զարմացած) Յե՞ս, ինչո՞ւ։

ԲՐԵԽԵՐ. (Պոկում է նրա մորուքը յեվ հետո անմեղ ձայնով շարունակում) Իսկ ինձ այդպես թվաց։

ՇՏՈՒՐՄ. Այ լավ վարպետություն։

ԲՐԵԽԵՐ. (Գցելով մորուքը մոտենում լրտեսին). Ահա թե ինչ, շան վորդի (ցույց է տալիս հեռուն)։ Վազիր այս ուղղությամբ մինչև պահակատեղին առանց կանգ առնելու։ Հակառակ դեպքում, հասկացա՞ր։ (Բռնում է ծոծրակից յեվ բռունցքը մոտեցնում քթին)։

ԱՆՑՈՐԴ (Զայրույթից կծկվելով). Օ. սատանա։

ԲՐԵԽԵՐ. Մեկ, մեկ, յերկու... (բաց թողնելով օձիքը. Անցորդը ցատկումներով արշավում է. Բրեխերն էլ յետեվից). յերեք.

ՇՏՈՒՐՄ. Հա, հա, հա. սա յել վոստիկանության շներին վարժեցնելու մի նոր ձև է։

ԲՐԵԽԵՐ. Բայց գիտե՞ս, յերբեմն լրտեսներից էլ օգուտ է ստացվում։

ՇՏՈՒՐՄ. Ի՞նչ օգուտ։

ԲՐԵԽԵՐ. Նա հարցրեց թե ժամը քանիսն է և հիշեցրեց մեզ, վոր արդեն ժամը յոթ և կեսն է։ Ժամանակն է։ Գնանք։

*Յերկուսն էլ արագ գնում են դեպի աջ։ Պաուզա։ Վոստիկանական հեռախոսի զանգի ձայն։ Պաուզա։ Յերկրորդ զանգ։ Բեմի հետևում ձայներ։ Յերկրորդ զանգ. այնուհետև հեռախոսը սկսում է անընդհատ զանգահարել։ Բեմի հետևում աղմուկը ուժեղանում է։ Ներս է մտնում հևալով Ռյուբեն հայհոյելով իր յետևից յեկող Գուրկեյին։*

ՌՅՈՒԲԵ. Տխմար, Ապուշ, ելի գլուխս... պահակատեղից վորտեղ ես հեռացել։ (Նայում է չորս կողմը յեվ չտեսնելով Բրեխերին)։ Վորտեղ է նա։

ԳՈՒՐԿԵ. Ո՞վ։

ՌՅՈՒԲԵ. Եշ։

ԳՈՒՐԿԵ. Բայց այստեղ կարծեմ եշ չկար։

ՌՅՈՒԲԵ (Հանկարծակի գալով). Չկա՞ր... իսկ հիմա կա։ Դու եշ ես։ Ո-ո։ Աստված իմ, յես հեռախոսին էլ չեմ լսում։ (Մոտենում է հեռախոսին, բաց է անում ու վերցնում լսափողը)։ Պահակատեղ 897։ Այո յես եմ, Ռյուբեն։ Ահա՞։ Ի՞նչ։ Արդեն սկսե՞լ են։ Ձերբակալե՞լ։ Զորք եք ուղարկում։ Այո... Ալլո, Ալլո. սատանա։ (Կախում է լսափողը ու արագ ման է գալիս բեմի վրա, բռնում է գլխից)։

*Բեմի հետևում աղմուկ*

ՌՅՈՒԲԵ (Ինքն իրեն). Քաշել։ Չթողնել։ Բռնել։ (Կանգ է առնում Գուրկեյի առաջ)։ Եշ, բաց թողիր վոճրագործներին։ Բաց թողիր կոմունիստին։ (Թափ է տալիս բռունցքը)։

*Ձախից մտնում է պատգամավոր Պուլպեն, նրա յետևից մտնում են գործարանատերը, տիկինը, Պաստորը և կավալերը։ Պուլպեյի փեշը պատռված է և տարբերվում է այս այն կողմը։ Բոլորը խոսում են հուզված։*

ՁԱՅՆԵՐ. Բայց այդ ինչպե՞ս, պարոն Պուլպե։ Դա սարսափելի յե։ Ագենտները Մոսկվայից են։ Դուք նրանց տեսե՞լ եք։ Բայց ինչի՞ն է սպասում վոստիկանապետը։

ՊՈՒԼՊԵ. (Դառնալով նրանց, ընդունում է յուր արժանապատվության համեմատ դիրք յեվ պարլամենտական հռետորի վոճով)։ Հարգելի պարոնայք և տիկնայք, մի՛ անհանգստանաք։ Վոչ մի ցույց չի լինի։ Մենք չենք թողնի։ Յես քիչ առաջ հրաշալի ճառ խոսեցի Ֆուլի գործարանի բանվորների առաջ։ Ինձ դուրս բերին ձեռների վրա, վորովհետև յես արդեն չեյի կարող կանգնել։ Բանվորներն ինձ հասկացան։ Նրանք հրճվում եյին։ Նրանք ինձ վրա ծաղիկներ թափեցին կարտոֆիլի մարգերից։ Ու այդ անմոռաց ճառի առթիվ նրանք խնդրեցին նվիրել իրենց թաշկինակիցս մի կտոր կամ իմ ռեդինկոտ կոստյումի կեսը. (վերցնում է կողքի պատռված կտորը)։ Բանվորների այդպիսի վերաբերմունքը դեպի սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչը շատ հուզիչ է։ Բայց դուք մի՛ անհանգստանաք։ Նրանց զգացմունքները լիությունից են առաջացել։ Դուք կարող եք հանգիստ լինել, վոստիկանությունը վոչ մի չափազանցություն չի թույլատրի։ Ահա մեր



պաշտպանը (ցույց է տալիս Ռյուբեյին յեվ Գուրկեյին, վորոնք փքվում են ինչպես հնդկահավեր)։ Ահա մեր հերոսները։ Կոմինտերնի ագենտներն արդեն սկսել են իրենց գազանությունները, բայց այդ բոլորը րոպեապես վոչնչացնում ենք։ Նրանց հանցագործության հետքերը ամեն տեղ էլ կան։ Մինչև անգամ ձեզ մեջ։ Այ, այ դուք տեսնո՞ւմ եք։ (Ցույց է տալիս անցորդի մորուքը, վորը ընկած է գետնի վրա)։ Ահա. (վերցնում է մատների ծայրերով) սա կարող է ծառայել նրանց գազանությունների իբրև փաստացի ապացույց։ Նրանք արմատներով դուրս են հանել մի պատկառելի ծերունու մորուքը, շատ կարելի յե ձեր պապի կամ պապու պապի միրուքն էլ է...

ԲՈԼՈՐԸ. Ո-ո։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Վոճրագործությունը կատարվել է լույս ցերեկով։ Բոլորի և միևնույն ժամանակ վոստիկանության աչքի առաջ։

*Բոլորը շրջապատում են պատգամավորին, աշխատելով տեսնել միրուքը։*

ՏԻԿԻՆ. Սա շատ գեղեցիկ ծերունի է յեղել։

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Համենայն դեպս շատ պարթեվ է յեղել։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. Զգույշ։ Զգույշ. չպատռեք։

*Բոլորը շոշափում են մորուքը։*

ԳՈՒՐԿԵ (դառնալով դեպի Ռյուբեն)։ Յերբ ես լսում եմ սոցիալ-դեմոկրատական պատգամավորության ճառը, ախորժակս բացվում է։ Պետք է յերշիկս ուտել։ Վորտեղ եմ դրել։ (Խառնում է գրպանները)։ Ահա... գտա... վոչ, սա հաց է։ Ահա, այստեղ է (ձեռքը տանում է հետևի գրպանը ու դուրս հանում մի փաթեթ). վոչ, սա յիլ չէ։ Սա կնոջս գուլպաներն են... ա... (խփում է ճակատին)։ Վոչ, այստեղ պիտի լինի։ Ահա։ Չե, սա հոտած ռումբն է։ (Փաթեթը, ռումբը և հացը բռնում է կրծքի վրա մի ձեռքով, իսկ մյուսով սկսում է խառնել գրպանները)։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. (Բուռն կրքով վեր է բարձրացնում միրուքը)։ Գնանք, գնանք նախագահի մոտ ու ամեն ինչ ցույց տանք։

*Շարժում։*

ՏԻԿԻՆ. Տվեք ինձ, տվեք ինձ. յես կտանեմ։ (Հրում է Գուրկեյին, վորն ամեն ինչ թափում է)։

ԳՈՒՐԿԵ. Ախ (կանչում է) վար ընկավ ռումբը. վար ընկավ։

ՌՅՈՒԲԵ (մոտ վազելով). Ի՞նչ։

ԳՈՒՐԿԵ. Թափվեց։ Այստեղ արդեն լճացել է։

ՌՅՈՒԲԵ. Եշ, իմ յերշիկս։ Ո-ո...

ԲՈԼՈՐԸ. (Քթերը բռնելով) Ի՞նչ հոտ է. Մենք խեղդվում ենք։ Ոգնություն։ Ազատեցեք (փախչում են զանազան կողմեր)։

*Հեռախոսը զանգահարում է. Ռյուբեն վերցնում է լսափողը։*

ՌՅՈՒԲԵ. (քիթը բռնած) Ալլո, ալլո, ինչ։ Սկսվեց։ Այո, այստեղ ռումբ պայթեց։

*Բեմի հետևում աղմուկ։*

## ՎԱՐԱԳՈՒՅՐ

## 2-ՐԴ ՊԱՏԿԵՐ

*Ընդհատակյա սենյակ, մի սեղան՝ յերկու աթոռ, մահճակալ։ Ձախից սանդուղներով մի դուռ։ Աջ կողմում, հատակից բարձր մի պատուհան, վորը նայում է դեպի փողոց։ Պատուհանից յերևում են մայթի վրա կանգնածների վոտները։ Դիմացի պատի մեջտեղը կախված է Կարլ Լիբկնեխտի նկարը։ Մարթան նստած սեղանի մոտ կարում է, Ֆրիցը պառկեցրել է յերկու աթոռ ու վրան բարձեր շարել իբրև բարիկադ։ Ինքն էլ փայտյա հրացանը բռնած դարան մտած կրակում է, յերևակայելով իրեն հերոս։*

ՖՐԻՑ Պիֆ-պաֆ։ Ահա։ Պիֆ-պաֆ։ Ֆաշիստներից մեկն էլ պակասեց։ Խփիր. Կամրադ Ֆրից։ Թող կորչեն սև շապիկներն ու յերկաթե սաղավարտները։ Կեցցե կոմունիստական յերիտասարդության միությունը։

ՄԱՐԹԱ (կանչում է). Ֆրից, Ֆրից...

ՖՐԻՑ. Մայրիկ. մի խանգարիր։ Հիմա կռվի ամենաթեժ ժամանակն է։ Ֆաշիստները կրակելուց հետո պիտի ցնցվեն։ Հիմա մենք կսկսենք հարձակումը։

ՄԱՐԹԱ, Արի այստեղ, վորդիս։ Յես ուզում եմ քեզ վրա չափել շորը։ (Թափ է տալիս յեվ նայում է յուր աշխատանքը)։ Ախ, ինչպիսի հերոս կլինես դու։

ՖՐԻՑ (խաղով տարվելով). Հառաջ, Հառաջ յեղբայրներ։ Կեցցե պրոլետարիատի միջազգային համերաշխությունը։ Կեցցե Մայիսի մեկը։ Հարձակվեցեք։ Ինձ հետևեցեք։ Հուռռա... (հրացանը ձեռքին հարձակվում է դեպի դուռը։ Դուռը հանկարծ բացվում է յեվ ներս է մտնում Գուրգեն)

ԳՈՒՐԿԵ. (Բռնելով փայտյա սվինը). Տա-տա-տա-տա. Արջի քոթոթ։ Դու արդեն սկսում ես կռվել վոստիկանության հետ։

ՖՐԻՑ. Դուք դուրս եք պատերազմական գործողությունների շարքից։ Ի՞նչ եք ուզում դուք։

ՄԱՐԹԱ. (Վեր կենալով յեվ ընդառաջելով վոստիկանին) Այո, ճիշտ է, ի՞նչ եք ուզում դուք։

ԳՈՒՐԿԵ (զննելով սենյակը). Սա հռչակավոր 36 տան նկուղն է։

ՄԱՐԹԱ. 36, այո, բայց ինչո՞վ է նա հռչակավոր։

ԳՈՒՐԿԵ. Յեթե առայժմ հռչակավոր չէ, հետագայում հռչակավոր կդառնա։ (Առանձին) Հ՜մ... զարմանալի յե. առայժմ չի նմանում գործադուլային կոմիտեյի։ (Նայում է մահճակալի տակ) Իսկ վորտե՞ղ է ձեր ամուսինը՝ Հանս Բրեխերը։



ՄԱՐԹԱ. Նա տանը չի։

ԳՈՒՐԿԵ. Տանը չի։ Հ՜մ... տարօրինակ է։ Այն ժամանակ, յերբ վերադառնա, ասեք, վոր յեկել եր Գուրկեն... վորպեսզի նա անմիջապես գա վոստիկանատուն։ (Ուզում է հեռանալ, բայց նկատում է, վոր Ֆրիցը իր վրա յե ուղղել հրացանը)։ Իսկ դու, արջի քոթոթ. նայիր։ Դեռ շուտ է քեզ կրակել վոստիկանության վրա։ (Գնում է շրխկացնելով իր յետեվից դուռը)։

*Ֆրիցը հարձակվում է դռան վրա և սկսում է իր սվինով ծեծել դուռը*

ՖՐԻՑ. Ոռռա... Հակառակորդը նահանջեց։ Հիմա հանգստանում ենք մինչև մյուս ճակատամարտը (ցած է դնում հրացանը)։

ՄԱՐԹԱ. Նստիր այստեղ։ Գոնե մի րոպե հանգիստ կաց։

ՖՐԻՑ (մոտենում է մորը). Մայրիկ, վոստիկանն ինչո՞ւ յեկավ։

ՄԱՐԹԱ. Չգիտեմ։

ՖՐԻՑ. Հա՛, խաբում ես, դու գիտես։ Դու չես ուզում ասել։ Յեվ շատ իզուր։ Ֆրիցը թեպետ այնքան էլ մեծ չի, բայց ամեն բան հասկանում է։

ՄԱՐԹԱ (սղմելով իր կրծքին), Իմ սիրելի Ֆրից, յես գիտեմ, վոր դու խելոք, համարձակ և հաստատակամ տղա կդառնաս։ Դու կմեծանաս և կդառնաս բանվոր դասակարգի իրավունքների մարտիկը։

ՖՐԻՑ. Վոչ մայրիկ, համաշխարհային պրոլետարիատի իրավունքների մարտիկը։

ՄԱՐԹԱ. Դեհ, իհարկե բոլոր յերկրների բանվորների։ Ահա այնպես, ինչպես եր մեր Կարլը (հայացքով ցույց է տալիս պատկերը)։

ՖՐԻՑ. Այո, յես կդառնամ այնպիսին, ինչպիսին եր Լիբկնեխտը։

ՄԱՐԹԱ (շփելով գլուխը, կամաց համբուրում է). Յեղիր այդպիսին։

ՖՐԻՑ (բարձրացնելով գլուխը, նայում է մոր աչքերին). Դեհ ասա, ասա, ինչո՞ւ յեկավ վոստիկանը։

ՄԱՐԹԱ. Ա՜խ, դու ի՞նչ համառն ես։ Դեհ, մտիկ արա, նրանք ինչպես յերևում է, մոռացել են ձերբակալել քո հորը մինչ Մայիսի մեկը։ Հիմա նոր են գլխի ընկել, բայց արդեն ուշ է։

ՖՐԻՑ. Անպիտաններ։

ՄԱՐԹԱ. Նրանք սպասում են այստեղ գտնել քո հոր ընկեր բանվորներին։

ՖՐԻՑ (Շտապով). Վոստիկանությունը նրանց այստեղ չի գտնի. յես կգնամ և կնախազգուշացնեմ նրանց (ուզում է գնալ)։

ՄԱՐԹԱ. Վոչ, մի դուրս գա։ Յերեխաներին վտանգավոր է փողոց դուրս գալ։ Միևնույն է հայրդ հիմա կվերադառնա։

ՖՐԻՑ. Վոչ, յես գնում եմ (վազում դեպի դուռը)։

*Դուռը բացվում է և ներս է մտնում Հանս Բրեխերը։*

ՖՐԻՑ (բռնելով նոր գիրքը)․ *Հայրիկ, քո հետևից վոստիկան եր յեկել։*

ՀԱՆՍ (համբուրելով կնոջ յեվ տղային)․ *Մարթա ճի՞շտ է։* (Հանում է գլխարկը)

ՄԱՐԹԱ․ *Այո։ Ինչպես յերևում է բանտերը դեռ լեցուն չեն։ Ինչ՞ կար քաղաքում։ Վո՞րտեղ եյիր։*

ՀԱՆՍ․ *Ցույցը հաջող կանցնի։ Միայն թե արյուն քիչ թափվեր։* (Մոտենում է սեղանին նստում է ու խորասուզվում մտածմունքների մեջ ձեռքը դնում է սեղանի վերա) *Հա, Շտուրմը այստեղ չի՞ յեկել։*

ՄԱՐԹԱ․ *Վոչ։*

ՀԱՆՍ․ *Նշանակում է նա հիմա կգա։* (դուռը ծեծում են)։

ՄԱՐԹԱ։ *Մտեք,*

ՇՏՈՒՐՄ (մտնելով)․ *Բարև ձեզ, տիկին Հանս։ Բարև Ֆրիցին։ Ինչու ես քիթդ կախել։ Այսոր պետք է ուրախ լինել։ Այսոր Մայիսի 1-ն է, ամբողջ աշխարհի աշխատավորության տոնը։*

*Պատուհանից յերևում է Գուրկեյի դեմքը*

ՖՐԻՑ (մռայլ) *Յես ինքս էլ գիտեմ։ Յես քիթս չեմ կախել, վո՞րտեղից յեզրակացրիր։*

ՇՏՈՒՐՄ․ *Գնանք Հանս։ Ամեն ինչ պատրաստ է։*

ՀԱՆՍ․ *Լավ* (վերցնում է գլխարկը) *Մարթա, յես գնում եմ. փակիր դուռն ու լուսամուտը։ Խնամիր Ֆրիցին։ Դեհ, ցտեսություն* (բռնում է կնոջ ձեռքը)։

ՄԱՐԹԱ․ *Վոչ Հանս, յես էլ կգամ քեզ հետ։*

ՀԱՆՍ․ *Լավ է միաս, Մարթա։*

ՄԱՐԹԱ․ *Բայց չէ՞ վոր այսոր ամեն մի ավելորդ անհատ թանգ է ցույցի համար։ Յեվ յերկրորդ՝ յես քեզ հետ կլինեմ։*

ՇՏՈՒՐՄ․ *Լավ, գնանք։ Նա իրավացի յէ։*

*Մարթան արագ գլուխը կապում է թաշկինակով։*

ՖՐԻՑ․ *Յես էլ, յես էլ։ Մի՞թե դուք ինձ չեք տանելու ձեզ հետ։*

ՄԱՐԹԱ․ *Ֆրիցխեն, սիրելիս, քեզ չի՛ կարելի։*

ՖՐԻՑ․ *Վոչ, յես ուզում եմ։ Հայրիկ, յես ուզում եմ ցույցի գալ։*

ՀԱՆՍ․ *Յերբ 18 տարեկան դառնաս, այն ժամանակ կարող ես մասնակցել ցույցին։*

ՖՐԻՑ․ *1՞8։ Յես մինչ այդ դեռ պիտի կռվեմ բարիկադների վրա,* (ուզում է լաց լինել)։

ՇՏՈՒՐՄ (հրամայողական տոնով)․ *Դու կմնաս այստեղ իբրև պահապան։ Ահա քեզ հրաման։*

ՖՐԻՑ (իսկույն սրբելով արտասուքը) *պատրաստ եմ։ Կկատարեմ։*



ՀԱՆՍ․ *Դեհ, գնանք* (դուրս է գալիս)։

*Մարթան, նայելով վորդուն, հետ է դառնում, համբուրում նրան, գնում։*

ՖՐԻՑ (Մենակ, անցնում է սենյակի մեջտեղով, փակում է դուռը վերցնում է հրացանը յեվ կանգնում դռան մոտ) *ինձ առաջ թվում եր վոր զինվորներին ձանձրալի յե ժամերով պահակ կանգնել։ Իսկ ինձ թվում է, վոր ձանձրալի չէ։ Յես կկատարեմ իմ պարտականությունը։* (բեմի հետեվից կրակոց) *Սա ի՞նչ է, կրակո՞ց* (նայում է յուր հրացանին) *Վոչ, Ֆրիցը արդեն խաղ չի անում...* (հրացանը նետում է անկյուն)։ *Հիմա դու իսկույն պիտի մեծ դառնաս։*

*Դուռը ծեծում են։*

ՖՐԻՑ․ *Ո՞վ է։*

ԾԵՐՈՒՆՈՒ ՁԱՅՆԸ (Դռան հետեվից) *Բացեք խնդրեմ։*

ՖՐԻՑ *Ո՞վ կարող է լինել։ Շտուրմը ինձ պատվիրեց պահպանել բնակարանը։ Թողե՞մ ներս, թե վոչ։* (Դուռը նորից ծեծում են)։ *Բայց կարող է պատահել, վոր բարեկամ է։ Իսկ յեթե թշնամի՞ յէ։ Համենայն դեպս պետք չէ վախենալ վտանգից։ Դա հաջողության գրավականն է.* (բաց է անում դուռը)։ *Մտեք։*

*Մտնում է ծերուկ անցորդը, այս անգամ ակնոցներով և յերկար սպիտակ բեխերով։*

ՖՐԻՑ․ *Ու՞մ եք ուզում։*

ԱՆՑՈՐԴ․ *Ըհը... Ըհը... Սա 36 նկուղն է։*

ՖՐԻՑ․ *Այո։*

ԱՆՑՈՐԴ․ *Իսկ դուք յերիտասարդ, այստեղ մենա՞կ եք։*

ՖՐԻՑ․ *Այո։*

ԱՆՑՈՐԴ․ *Շատ ցավալի յէ։ Իսկ ու՞ր են միացածները։ Նրանց արդեն հաջողվեց փախչել։*

ՖՐԻՑ (Լուս, կասկածավոր նայում է նորեկի վրա)։

ԱՆՑՈՐԴ․ *Իսկ յես ուզում եյի ձեր հորը տեսնել։*

ՖՐԻՑ․ *խորհուրդ չեմ տալիս պատահել հորս։*

ԱՆՑՈՐԴ․ *ինչու՞։*

ՖՐԻՑ․ *Նա ուժեղ բռունցքներ ունի։*

ԱՆՑՈՐԴ․ (Մոտենալով սեղանին) *սատանան տանի։ Սա ինչ է* (վերցնում է ծխամուրճը յեվ սկսում է դիտել) *սա ձեր հոր ծխամուրճն է։*

ՖՐԻՑ․ *Այո, նա միշտ դրանով է ծխում։*

ԱՆՑՈՐԴ (առանձին)․ *Այո... լավ կլինի առայժմ գնամ։ Ցտեսություն, յերիտասարդ, ձեր հորը ասեք, վոր յեկել եր մի բարեկամ, վորը դեռ կհանդիպի նրան։*

ՖՐԻՑ. Ասեք այդ բարեկամին, որ հորս չպատահի: Իմ հայրը ուժեղ բռունցքներ ունի...

ԱՆՑՈՐԴ (մի կողմը գնալով). Սատանան տանի քո հորն իր բռունցքներով: (Փաղաքշանքով) ցտեսություն, ցտեսություն (գնում է):

ՖՐԻՑ. Սա թշնամի յեր... Ցեվ ինչու յեն նրանք մեզ մոտ թրև գալիս:

*Բեմի հետևից քայլերի ձայներ, խուլ կրակոցներ, անհանգիստ ձայներ:*

ՊԱՍՏՈՐԻ ՁԱՅՆԸ (բեմի ետեվից). Պարոններ, յերեսնիվայր պառկեք:

ՖՐԻՑ. (վազում է պատուհանի մոտ, կանգնում է նստարանի վրա յեվ նայում դուրս): Ահա... կարծեմ սկսվեց: Ոստիկանները կրակում են:

*Դուռը բացվում է: Մեկը մյուսի յետևից ներս են մտնում, պատգամավոր Պուպլեն, պաստորը, տիկինը, նրա կավալերը և գործարանատերը. Բոլոր անհանգիստ են: Գլխարկները ծուռ դրած:*

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ (Ֆրիցին). Անմեղներիս ապաստան տվեք (հուզված):

ՖՐԻՑ (Աթոռի վրայից, դատավորի ձայնով). Իսկ ով եք դուք:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. յես սոցիալ-դեմոկրատ Պուպլեն եմ:

ՖՐԻՑ. Դուք դեմոկրատ եք: Այդ դեպքում ձեզ համար այստեղ տեղ չկա: Այստեղ Լիբկնեխտի նկարն է կախված:

ԳՈՐԾԱՐԱՆՏԵՐ (Պատգամավորին). Ուշադրություն մի դարձնեք այդ լակոտի վրա: Տեղավորվեցեք այստեղ, պարոններ:

ՊԱՍՏՈՐ. (Ֆրիցին) ոյ, ոյ, ոյ, վորդիս: Այդպես լավ չի: Աստված մեզ պատվիրել է սիրել վոչ միայն մեր թշնամիներին, այլ և ուրիշ կուսակցությունների անդամներին: Դուք բանվորի զավակ եք և պարտական եք սիրել հարուստներին: Ձեզ համար պատիվ է, վոր մենք ձեր նկուղը յեկանք:

ՖՐԻՑ. Ախ, ուրեմն դուք ինքներդ եք կամեցել գալ մեր նկուղը, ինչ լավ է այդ: Հայրս պատմում եր ինձ, վոր ԽՍՀՄ-ում հարուստները արդեն տեղափոխվել են այն նկուղները, վորտեղ առաջ բանվոր ներնեյին ապրում: Այդպես, ուրեմն դուք էլ տեղափոխվում եք: Այդ շատ լավ է:

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Ջայնդ. կորիր այստեղից:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ. դուրս վռնդեցեք դրան, գուցե փողոցում նրան գնդակահարեն:

ՖՐԻՑ (հպարտ). Ցես ինքս եմ գնում: Կարող եք չանհանգստանալ (աթոռից վար է ցատկում ու հեռանում է):

ՊԱՍՏՈՐ (Երա յետեվից). Գազանի ձուտ:



*Փողոցի աղմուկը ուժեղանում է: Պատուհանի մոտ լսվում է կրակոց:*

ՏԻԿԻՆ. ոյ, ոյ, ոյ, (ուշաթափվում է)

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. վոչինչ:

*Գործարանատերը և կավալերը զբաղվում են նրանով:*

ԿԱՎԱԼԵՐ. ֆրաու Կու... ֆրաու Կու...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Հանեք նրա շղարշը: Ջուր բերեք: (Հանելով շղարշը նայում է նրան) սա իմ Կունիգունդան է, իմ օրինական կինը: Բայց ինչպես հայտնվեց նա այստեղ: (կավալերին) իսկ դուք յերիտասարդ ինչ գործ ունեք նրա հետ... Հ՞ը (բռունցքով հարձակվում է):

ՊԱՍՏՈՐ. Ցեղբայրներ, խաղաղություն խաղաղություն ընտանիքներում, խաղաղություն արդյունաբերության մեջ: Թողեք կռիվը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ (պատուհանի մոտ, սարսափած). Փողոցը շարժվեց Ամեն ինչ կորած է: Նրանք նկուղներից դուրս յեկան...

*Պատուհանի մեջ յերևում է Ֆրիցի վոտները և Րյուբեյի վարտիկը:*

ՐՅՈՒԲԵՅԻ ՁԱՅՆ. Հենց դու յել պետք եյիր ինձ: Ո՞ւր են նրանք:

ՖՐԻՑԻ ՁԱՅՆԸ. Այստեղ են քեռի, այստեղ բոլորը նկուղումն են

ՐՅՈՒԲԵՅԻ ՁԱՅՆԸ. Գուրկե, տուր նասոսը: Ներս խոթիր պատուհանից:

*Նկուղում բոլորը անհանգստանում են:*

ՐՅՈՒԲԵՅԻ ՁԱՅՆԸ. կոտրիր ապակին, դիր նասոսը:
(Պատուհանից յերեվում է, թե ինչպես Ֆրիցը փախչում է):

ԳՈՒՐԿԵՅԻ ՁԱՅՆԸ. բռնիր, լակոտին բռնիր:

*Ապակին ջարդվում է և կտորները ցրվում են այս ու այն կողմը: Րյուբեն իր գլուխը ներս է մտցնում:*

ՐՅՈՒԲԵ (պատուհանից). Այստեղ եք դուք, սիրելիներս, Այստե՞ղ է գործադուլային կոմիտեն: (Ներս է մտցնում շպրիցը յեվ բաց թողնում պատուհանից գազը):

ԲՈԼՈՐԸ. Թողեք, ի՞նչ եք անում: Մենք կոմիտեն չենք...

*Փողոցում աղմուկ:*

ՊԱՍՏՈՐ. Ցես լալիս եմ, յեղբայրներ: Սրանք խանդաղատանքի արտասունքներ են:

ԲՈԼՈՐԸ. Վո՛չ վո՛չ: Սա արցունքաբեր գազ է:

*Բոլորը տրորում են աչքերը:*

ՊԱՍՏՈՐ. Ցեղբայրներ, մի լաց լինեք: Հրճվենք

ԲՈԼՈՐԸ. (լալիս են) Հրաժեշտ։

ՊԱՍՏՈՐ. Հրաժեշտ։ Մենք կհաղթենք։

ԲՈԼՈՐԸ. Ա... ա... կհաղթենք։ (Կռակոց, ճկուղում բոլորը ընկնում են։ Փողոցում տիրում է լռություն։ Հեռվում լսվում է «Ինտերնացիոնալի» ձայնը։

*Այդ ցուցարարներն են անցնում։*

*Թարգմ. Ա. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍՅԱՆ*



# Ա Ր Ց Ո Ւ Ն

*Դրամատիկական էտյուդ հոլլանդական բանվորների կյանքից։*

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԳՈՒՍՏԱՎ ՇՏԻԲԵՐԳ. Բանվոր-մետաղագործ, հոլլանդական կոմունիստական կուսակցության անդամ։ Յերկարահասակ, թիկնավետ։ Սանական, արտահայտիչ դեմքով։ Հագնված է հասարակ, ծխում է կարճ ծխամորճ։

2. ԼՈՒԻԶԱ. Նրա կինը, տեկստիլ գործարանի բանվորուհի։ Ջահել է, բայց դեմքը հոգնած ու ուժասպառ։

3. ՖՐԻՑ ԳՐՅՈՒՆՎԱԼԴ. սոցիալ-դեմոկրատ, Շտիբերգի տան տերը, ունի գլխարկի արհեստանոց։ Միջինից ցածր հասակի, ծխում է սիգար, գլխին փափուկ ֆետրյա գլխարկ, աչքերին յեղջյուրավոր ակնոց։

4. ՎԻԼԼԻ ԲԵՑՆԻՆԳԵՐ. Անկուսակցական բանվոր, աշխատում է Գուստավ Շտիբերգի հետ միասին։ Ալեզարդ մազերով, պղնձյա շրջանակով ակնոց։ Հագած է կաշվե բաճկոն և յերկարաճիտ կոշիկներ։

5. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳՐՈՍՍ. Շտիբերգների հարեվանուհին, գործազուրկ հասակավոր, նիհար կին։

*Գուստավ Շտիբերգի սենյակը։ Աղքատ համեստ, կահավորում պատերին-կարմիր ժապավենով ու կանաչով շրջապատված։ Կարլ Լիբկնեխտի և Ռոզա Լյուքսեմբուրգի նկարները։ Առավոտ է։ Լուիզան նստած սեղանի առաջ կարկատում է Գուստավի բաճկոնը։ Նրան դեմ ու դեմ նստած է Մարգարիտա Գրոսսը։*

ԳՐՈՍՍ. Ամբողջ գիշերը անձրև եր գալիս, իսկ հիմա պայծառ առավոտ է։

ԼՈՒԻԶԱ. Այո։ Այսօր գարնան առաջին օրն է։

ԳՐՈՍՍ. Ասես տոն լինի։ (Ցավակցությամբ) Սակայն, ինձ համար արդեն յոթ ամիս է, ինչ շարունակ տևում է տոնը։ Վոչինչ չեմ անում։

ԼՈՒԻԶԱ. (Հանգարացնելով նրան) վոչինչ, Մարգարիտա, կստանանք աշխատանք։ Ձմռոր ամենքի հետ էլ այդպես է պատահում։ Շրջում են, շրջում անգործ, իսկ հետո անշուշտ մի բան գտնվում է։

ԳՐՈՍՍ. Յոթ ամիս... Յեթե չլիներ իմ փոքրիկ Կարլը, վոր մինչև վերջին կոպեկը տուն է բերում, ինձ վաղուց արդեն Մորգ տարած

կլինեյին։ Շնորհակալ եմ նաև ձեզանից, որ այդպես ջերմ հոգս եք քաշում։

ԼՈՒԻԶԱ (հուզված)․ Դեհ, ինչ եք ասում, Մարգարիտա։ Ցեվ ինձ և Գուստավին շատ լավ հայտնի չէ, թե մարդ ինչպես է իրան զգում, երբ նրա առաջ փակվում են գործարանի դարպասները։ Գուստավը միշտ կրկնում է, որ լավ ձեռք և գլուխ ունեցող մարդը երբեք չի կորչի…

ԳՐՈՍՍ․ Այո։ Քո Գուստավը լավ ձեռքեր ունի և ուսերի վրա յել խելոք գլուխ։ Նա յերբեք չի կորչիլ։

ԼՈՒԻԶԱ․ (Մի կողմ է դնում բանկոնը յեվ գլուխը վայր կախում)։ Բայց այնուամենայնիվ նա ինչքան ժամանակ մայթերը չափեց, մինչև գործ գտնելը։ Նա չափազանց տաքարյուն է և անզուսպ։ Ցես վախենում եմ նրա համար․ Մարգարիտա։

ԳՐՈՍՍ․ Գուստավի համար։

ԼՈՒԻԶԱ․ Այո։ Դեռ յերեկել նա դուրս յեկավ բանվորական միտինգում և կոչ արավ գործադուլի։ Նրան հետևում են լրտեսները։ Ցես համոզված եմ, որ նրան վաղը և յեթ կհեռացնեն գործարանից։

ԳՐՈՍՍ․ Հիմա նա աշխատո՞ւմ է։

ԼՈՒԻԶԱ․ Ոչ։ Գործարանը կանգնած է։ Բանվորները գործադուլ են հայտարարել։ Չէ՞ որ այսոր Մայիսի մեկն է։

ԳՐՈՍՍ (ինչ որ բան մտաբերելով)․ Ահա թե բանն ինչումն է։ Այսօր ամբողջ առավոտ Կարլս շրջում եր հայելու առաջ։

Հագավ նոր կոստյումը, նոր կոշիկները, կապեց տոնական փողկապը։ Իմ հարցին, թե ո՞ւր ես գնում այդպես պճնված, նա ինձ համբուրեց և ոչինչ չպատասխանեց․ (պաուզա)։ Լուիզա, որտե՞ղ է Գուստավը։

ԼՈՒԻԶԱ․ Գիտեմ, հավանական է ծերուկ Բեյնինգերի մոտ է։ Յերբ նա տուն վերադարձավ, դուրսը արդեն լույս եր։ Նա միայն կես ժամ քնեց և հետո նորից փախավ։ Ցես վախենում եմ նրա համար, Մարգարիտա…

(Մտնում է Ֆրից Գրյունվալդը)

ԼՈՒԻԶԱ․ Բարև ձեզ, պարոն Գրույնվալդ։

ԳՐՈՍՍ․ Բարի լույս, պարոն Գրունվալդ։

ՖՐԻՑ․ (Հասու) Շտիբերգը չի՞ յեկել։

ԼՈՒԻԶԱ․ Նա շուտով գալու յէ։ Նստեցեք, պարոն Գրյունվալդ, (տալիս է աթոռը)։

ՖՐԻՑ․ Սատանան տանի ձեր աթոռը… (ցույց է տալիս ձեռքի փոքրիկ դրոշակը)։ Ո՞վ է կախել այս ձեր դռանը։

ԼՈՒԻԶԱ․ (վախենալով) Չգիտեմ, պարոն Գրյունվալդ։

ՖՐԻՑ․ Իսկ յես գիտեմ։ Գիտեմ։ Այս ձեր ամուսինն է կախել իմ տան վրա, ազնիվ սոցիալ-դեմոկրատ Ֆրից Գրունվալդի տան վրա, կարմիր դրոշակ Մայիսի մեկին։ Այդ չը-լը-ված բան է։ Սատանան գիտե, թե ինչ է։ Ցես չնչին կոպեկներով եմ տալիս ձեզ իմ փառավոր



բնակարանը, յես թույլ են տալիս ձեզ օգտվել իմ սարայից և չերդակից, իսկ դուք… քիչ է մնացել այստեղ կոմենտերնի բաժանմունք բաց անեք։ Այսոր այստեղ կարմիր դրոշակ են կախել, վաղը բաց կանեն ընդհատակյա տպարան, իսկ մյուս որը հեղափոխություն կկատարեն։ Ինչի՞ յե նման այս ամենը։ Ո՞րտեղ է ձեր ամուսինը, որտե՞ղ է ձեր ամուսինը, սատանան տանի։

ԼՈՒԻԶԱ․ Ցես ձեզ ասացի, որ նա շուտով գալու յէ։ Նա գնաց ընկերոջ մոտ։

ՖՐԻՑ․ Ընկերոջ մո՞տ։ Իսկ ինչու՞ չի գնացել աշխատանքի։ Նրան դո՞ւրս են գցել։

ԼՈՒԻԶԱ․ Ոչ, նրան դուրս չեն գցել։ Բանվորները գործադուլ են հայտարարել։

ՖՐԻՑ․ (անսպասելի լուրերից ընկնում է աթոռի վրա)… Նրա գործարա՞նն էլ։

ԼՈՒԻԶԱ (զարմացած)․ Իսկ մի՞թե շատ գործարաններ են գործադուլ հայտարարել․

ՖՐԻՑ․ Ծույլ մարդիկ շա՜տ։ (Մարգարիտային) Ձեր որդին նույնպես, խոսք չկա,—լա՜վն է։

ԳՐՈՍՍ․ (անհանգիստ)․ Իսկ մի՞թե Կարլին բան է պատահել։

ՖՐԻՑ․ (սիգար է ծխում)․ Առայժմս առանձին ոչինչ չկա, բայց շփվում է գուծադուլավոր ամբոխի հետ և հավանական է, պատրաստվում է դեմոնստրացիայի դուրս գալու։ (Արհամարանքով)․ Դե-մոնստրանտ… պարոն վոստիկանապետը կկարողանա բավականին լավ վարվել այդ դեմոնստրանտների հետ։

ԳՐՈՍՍ․ (հուզված)․ Դուք կարծում եք, պարոն Գրյունվալդ, որ վոստիկանության և բանվորության միջև ընդհարո՞ւմ կպատահի։

ՖՐԻՑ․ Իսկ դուք կարծում եք, վոստիկանությունը թույլ կտա փողոցներում անկարգություննե՞ր սարքել… Ի՞նչպես չէ, մեզ մոտ, փառք աստծո, Ռուսաստան չէ… Ի դեպ, Գրոսս, դուք ինձ բնակարանի յերկու ամսվա վարձը չեք վճարել։

ԳՐՈՍՍ․ (կամաց)․ Կարլը կստանա աշխատավարձ, պարոն Գրյունվալդ, մենք անմիջապես կվճարենք։ Չէ՞ որ յես յոթ ամիս է գործազուրկ եմ։

ՖՐԻՑ․ (գոգովելով)․ Դուք անգործ մարդ եք դառնում, փող չունեք, իսկ յես պետք է սովից մեռնեմ, ինչ՞ ես… Ապերախտ մարդիկ… Ցես ձեզ չնչին կոպեկներով տալիս եմ իմ փառավոր բնակարանը, թույլ եմ տալիս օգտվել իմ սարայից և չերդաքից, իսկ դուք… դուք յերկու ամսով փող չեք վճարում։ (Նկատելով Կարլի յեվ Ռոզայի նկարները)․ ո՞վ է կախել այս նկարները։ Ազնիվ սոցիալ-դեմոկրատի տանը չեն կարող դավաճանների նկարներ լինել։ Անմիջապես հանեցեք։ Ցես ձեզ չնչին կոպեկներով եմ տալիս [illegible] բնակարանը։

ԼՈՒԻԶԱ (ընդհատելով նրան). Կգա Գուստավը, նրա հետ կխոսեք, պարոն Գրյունվալդ։ Իսկ բզավել դուք կարող եք ձեր գլխարկի արհեստանոցում։

ՖՐԻՑ. Արհեստանոցո՞ւմ... տասն և մեկ աշխատավորուհիներից գոնե մեկը գար այսօր աշխատանքի, ե՛։ Անկարգություն է, սատանան գիտե, թե ինչ... Թեկուզ ինքդ նստիր մեքենայի առաջ։

ԼՈՒԻԶԱ. (հեգնանքով) Իսկ դուք փորձեցեք, պարոն Գրյունվալդ։

(Մտնում են Գուստավ Շտիբերգը և Վիլլին)

ԳՈՒՍՏԱՎ. (Դռների մեջ). Ոհո՜, այստեղ ինձ մոտ մի ամբողջ միտինգ է։ (մտնելով բարևում է). բարև ձեզ, Մարգարիտա։ Շնորհավորում եմ ձեզ այսօրվա տոնով, պարոն Գրյունվալդ։

ՖՐԻՑ. Ի՞նչ տոն։

ԳՈՒՍՏԱՎ. Ինչպե՞ս թե ինչ տոն։ Այսօր մայիսի մեկն է։

ՖՐԻՑ (արժանապատվությամբ). Ազնիվ հոլլանդացու և սոցիալ-դեմոկրատի համար այդպիսի տոներ գոյություն չունեն։

ԳՈՒՍՏԱՎ. Այո, իսկապես, ես մոռացել էյի, որ դուք... ամենաազնիվ հոլլանդացի յեք (նստում է սեղանի մոտ). Լուիզա, տուր մի բան շտապ ուտելու։ Հիմա ընկերներս պիտի հավաքվեն։ 12-ին նշանակված է դեմոնստրացիա։ Դուք էլ մեզ հետ կգաք, պարոն Գրյունվալդ։

ՖՐԻՑ. Մեր կոմիտեն այսօր կենդանաբանական պարտեզի ոգտին կազմակերպում է փուդբոլի մատչ։

ԳՈՒՍՏԱՎ. Շշանակում է, ձե՞ր ոգտին։ Այդպես։ Լսեցեք Գրյունվալդ, ինչու՞ դուք ձեր գլխարկի արհեստանոցում չեք։

ՖՐԻՑ. Անեծք։ Վոչինչ, Գուստավ Շտիբերգ, այդ բոլոր խաղերը ձեզ շատ թանգ կնստեն։ Հա՛ ինչ՞ է սա (ցույց է տալիս դրոշակը)։ Յես ձեզ եմ հարցնում, ինչ՞ է սա։

ԳՈՒՍՏԱՎ (հանդարտ). Սա՞։ Ահա սա փայտի կտոր է, իսկ սա՝ կարմիր չիթ։ Հասկանալի՞ յե։

ՖՐԻՑ. Ձեր տունը կարմիր դրոշակներ կան։ Պատերին—դավաճանների նկարներ։ Իսկ յես աննշան կոպեկներով եմ տալիս ձեզ իմ փառավոր բնակարանը, յես ձեզ թույլատրում եմ ոգտվելու...

ԳՈՒՍՏԱՎ (կտրուկ). Փոխեցեք պլատինկան, Գրյունվալդ։ Կարլին և Ռոզային չհամարձակվեք դուք դավաճաններ անվանել. լսո՞ւմ եք, չհամարձակվեք (կանգնում է, ուժով հետ հրելով աթոռը) Իհարկե, դուք, սոցիալ-դեմոկրատներդ չեք սիրում նրանց, ում սիրում է պրոլետարիատը, և ընդհակառակը, ում սիրում եք դուք, մենք նրանց չենք սիրում...

ՖՐԻՑ. Սոցիալ-դեմոկրատները Հոլլանդիան փոքր կանգնեցրին



ԳՈՒՍՏԱՎ (հեգնանքով). Բանվորներից յոթը կաշի յեք քերթում, գործազրկությունը ուժեղանում է, լավագույն պրոլետարներին դուք գցում եք բանտերը, բայց այդ ամենը, Գրյունվալդ, յերկար չի տևի, լսո՞ւմ եք, յերկար չի տևի։ Դասակարգային պայքարն ուժեղանում է, բանվորությունը գլուխ է բարձրացնում...

ՖՐԻՑ. Մենք պաշտպանում ենք ամբողջ ազգության միասնականությունը, բնակչության բոլոր խավերի շահերը, իսկ դուք բզավում եք դասակարգային պայքարի մասին։ «Դասակարգային պայքար» ֆրազան արդեն հնացել է, նա չի դիմանում վոչ մի քննադատության։

ԳՈՒՍՏԱՎ. Ահա վորտեղ է ձեր իսկական դեմքը։ Իսկ մենք, կոմմունիստական կուսակցության անդամներս...

ՖՐԻՑ (սարսափած). Դուք կոմունիստական կուսակցության անդամ եք գրվել... (գլխից է բռնում) Ազնիվ սոցիալ-դեմոկրատը—բոլշևիկնե՛ր... Յես չնչին կոպեկներով տալիս եմ ձեզ..,

ԳՈՒՍՏՈՎ. Այո, յես կոմկուսակցության անդամ եմ։ Մենք պաշտպանում ենք միմիայն աշխատավորների շահերը և կռվում ենք շահագործողների դեմ։ Հասկանալի՞ յե։ Բանվոր դասակարգը մի յերկրում արդեն վերցրել է իշխանությունը, նրանք տապալել են բուրժուազիային... Այդ յերկիրը Ռուսաստանն է։ Սոված, պատառոտված յերկիրը վանեց Անտանտայի գրոհը տասն և չորս ֆրոնտներում և հիմա նոր կյանք է կառուցում։ Կանցնի մի քանի տարի և Խորհրդային Միությունը կհասնի և կանցնի ձեր գովաբանած քաղաքակիրթ և կուլտուրական յերկրներից։ Այնտեղ դրամատերերին չեն արդարացնում, չեն կործանում, ավերում բանվորական թերթերի խմբագրությունները։

(Մտնում է Վիլլի Բեյնինգները)

ՎԻԼԼԻ. Բարի լույս։

ԼՈՒԻԶԱ. Բարև ձեզ, Վիլլի։

ՖՐԻՑ (անբավական). Մի ագիտատոր ևս հայտնվեց։ Սատանան գիտե ինչ է։ Համբերությունը սկսում է հատնել։ Յես չնչին կոպեկներով տալիս եմ իմ փառավոր բնակարանը...

(Գնում է հետեվից պինդ փակելով դուռը)

ԳՐՈՍՍ (կանգնելով). Յես գնացի, Լուիզա։

ԳՈՒՍՏԱՎ. Այդ ո՞ւր, Մարգարիտա։ Յեկեք միասին թեյ խմենք։

ԳՐՈՍՍ. Շնորհակալություն, Գուստավ։ Յես անհանգիստ եմ իմ Կարլի համար։

ԳՈՒՍՏՈՎ. Վոչինչ, Մարգարիտա, ամե ինչ կարգին է։ Հենց քիչ առաջ յես տեսա ձեր Կարլին։

ՎԻԼԼԻ. Նա դրոշակը ձեռքին կանգնած էր կալոնայի առաջը։ Լավ յերիտասարդ է ձեր Կարլը։ Նրանից ոգտակար մարդ դուրս կգա։

ԳՐՈՍՍ. (վախեցած), Դրոշակո՞վ։ Յես գնացի, (ետպ գնում է)

*ԼՈՒԻԶԱ. Ես ձեզ կուղարկեմ* (գնում է նրա հետ միասին)։

*ԳՈՒՍՏԱՎ.* (Վիլլիին). *Դե՛հ, ի՞նչ կա, ծերուկ, հավաքվում են տղաները։*

*ՎԻԼԼԻ. Սպասում են քեզ, Գուստավ։ Վոստիկանությունը շրջապատել է բոլոր թաղամասերը։*

*ԳՈՒՍՏԱՎ. Արդե՞ն։*

*ՎԻԼԼԻ. Այո։ Ֆաշիստները պատրաստվում են հանդիպական հայրենասիրական դեմոնստրացիայի։ Պետք է յենթադրել, վոր այսոր բավականին դժվար է լինելու։*

*ԳՈՒՍՏԱՎ. Ըստ յերևույթին, այո։ Ընկերները այդ մասին գիտեն։*

*ՎԻԼԼԻ. Գիտեն։ Յերկաթուղայինները հավաքվում են նվագախմբով։*

*ԳՈՒՍՏԱՎ. Տակսի և ավտոբուսների շոֆերները միացան գործադուլին։ Հիմա միտինգներ են գնում կառուցողների մոտ։ Հենց նոր ստացվեցին հեռագրեր, վոր ամենուրեք գործադուլներ են սկսվել։*

*ՎԻԼԼԻ. Լավ է։ Ճշմարիտ է, վոր վոստիկանությունը այսոր կոնֆիսկացիայի յե յենթարկել թերթի համարները։*

*ԳՈՒՍՏԱՎ. Ճշմարիտ է։ Բայց այնուամենայնիվ տղերքը կարողացան մի մասը ցրել։ Հիմա վոստիկանությունը շրջապատել է կոմկուսի շենքը ու կոմունիստական և կոմյերիտական թերթերի խմբագրությունները։ Այնտեղ վոչ վոքի չեն թողնում։*

*ՎԻԼԼԻ. Դե՛, Գուստավ, ժամանակն է գնալու։* (Բեմի հետևից ձայներ)։

> *«ԳՈՒՍՏԱՎ, ԳՈՒՍՏԱՎ, ժամանակ է սկսել։ ԳՈՒՍՏԱՎ, դուրս յեկ, ընկերները գալիս են»).*

*ԳՈՒՍՏԱՎ* (Տեղից վեր կենալով). *Այո, Վիլլի, հարկավոր է գնալ* (կանչում է). *Լուիզա, Լուիզա։*

*ՎԻԼԼԻ. Ուրեմն շուտ արի, Գուստավ* (գնում է)։

*ԳՈՒՍՏԱՎ. Ես այս րոպեյիս.* (կանչում է), *Լուիզա, Լուիզա, վորտեղ ես։*

*ԼՈՒԻԶԱ* (մտնում է). *Ես այստեղ եմ, Գուստավ։*

*ԳՈՒՍՏԱՎ. Տուր, սիրելիս, իմ բաճկոնը։* (Հագնում է բաճկոնը ու գլխարկը դնում). *Դե՛, Լուիզա, յես գնացի,* (գրկում է կնոջը)։

*ԼՈՒԻԶԱ. Գուստավ... Գուստավ... Հարկավոր չէ գնալ։*

*ԳՈՒՍՏԱՎ. Ի՞նչ յես ասում, Լուիզա։ Ես կուսակցության անդամ եմ, կալոննայի ղեկավարը և հանկարծ վերջին մոմենտին լքեմ։*

*ԼՈՒԻԶԱ* (Լալիս է). *Գուստավ... յես ինչ վոր դժբախտություն եմ զգում... վոստիկանությունը... ֆաշիստները...*

*ԳՈՒՍՏԱՎ. Հանգստացիր, սիրելիս։* (Համբույր)։ *Ամեն ինչ լավ կլինի։ Չէ՞ վոր մենք տասնյակ հազարներ ենք... Այս մոմենտին ամբողջ աշխարհի աշխատավորները դուրս են գալիս փողոց բողոք հայտնելու իրենց ստրկացնողների դեմ... Մի՞թե յես պիտի քաշ գամ մասսայի պոչից։ Դու ինքդ պետք է արհամարհես այդպիսի ամուսնուն և կարմրես նրա համար։ Հո ճիշտ է, Լուիզա...* (Նորից ձայներ՝ «Գուստավ, ժամանակ է... յեկ սկսենք... մյուսները արդեն շարժվեցին»)։ *Հո ճիշտ է։*



*ԼՈՒԻԶԱ* (Հաստատ). *Լավ։ Գնա.* (Համբուրում է նրան)։

*Գուստավը գնում է։ Բեմի հետևում յերգում են, նվագածություն։ Դանդաղ իջնում է*

*ՎԱՐԱԳՈՒՅՐԸ*

*Վարագույրը փակ է։ Գործողությունը կատարվում է փակ վարագույրի հետևում*

*Դահլիճում մութ է։ Անհանգիստ զանգահարում է հեռախոսը։*

*ՁԱՅՆ. Ես խոսում եմ կենտրոնական ռայոնի վոստիկանապետի հանձնարարությամբ։ Փողոցների ողակումն ուժեղացնել։ Ձեռք առնել դեմոնստրացիան վերջ տալու բոլոր միջոցները։ Ձերբակալել ղեկավարներին ու առաջնորդներին։ «Պողպատյա սաղավարտ»-ին արգելք չհանդիպանալ...*

*(Բեմի յետևում յերաժշտություն, յերգեր, լոզունգներ)։*

— Վողջո՜ւյն խորհրդային Միության աշխատավորներին։
— Կեցցե՛ ԽՍՀՄ աշխատավորության ճնգամյակը։
— Կորչի՛ նոր սպանդանոցը։
— Կեցցե՛ պրոլետարիատի միջազգային համերաշխությունը։

*ՀԱՏՈՒ ՁԱՅՆ. Հրամայում եմ անմիջապես ցրվել։ Դեմոնստրացիան արգելված է...*

*ՀՈՒԶՎԱԾ ՁԱՅՆ. Կորչի՛ կապիտալիստական բռնությունը։ Ֆաշիստներին կարելի յե իսկ մեզ վո՞չ։*

**ԼՈԶՈՒՆԳՆԵՐ**

— Կորչեն բոլշևիկները...
— Կորչեն ֆաշիստները ու պրովակատորները...
— Մահ կարմիրներին...
— Կեցցե պրոլետարիատի միասնականությունը...

*(Նլեկտրական կարմիր լապտերները մարվում են։ Աղմուկ։ Լսվում է խուլ կրակոց, նրա հետևից—մյուսը... յերրորդը... չորրորդը...)։*

*ՁԱՅՆԵՐ. Բռնիր նրան, Բռնիր։ Վոստիկանատուն տարեք։*

*ԿԱՆՉ. Ըն-կեր-նե-՛ր։*

*ՎԱՐԱԳՈՒՅՐ.*

*Լույիզան գլխակոր նստած է սեղանի առաջ։ Հեռվից լսվում են կրակոցներ և աղմուկ։ Նրա և վազում Մարգարիտան։ Նրա դեմքը դժգույն է, աչքերը տենդոտ, մազերը անկարգ և ցիր ու ցան։*

*ԳՐՈՍՍ. Կրակում են, Լուիզա... իմ Կարլը,-ո, աստված իմ, Ինչ յեղավ նրա հետ* (հեկեկում է) *կսպանեն... Լուիզա, կսպանեն նրանք*

իմ Կարլին։ (Ուժասպառ ընկնում է աթոռի վրա յեվ գլուխը դնում է սեղանի վրա)։

(Մտնում է Ֆրից)

ՖՐԻՑ. Հոլլանդիայի մայրաքաղաքը նման է պաշարված բանակի... Զրահակիրներ... տանկեր... Մինչև ատամները զինված շուցմաններ։ Միայն պակասում են ոդանավեր ու թունավոր գազեր... (պաուզա։ Բռնում է Մարգարիտայի կողքին) Հե՛յ, դուք... լսեցեք... Մարգարիտա Գրոսս։

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ եք ուզում դուք նրանից։ Չեք տեսնում ինչ դրության մեջ է խեղճը։

ԳՐՈՍՍ. (Փայտե ձայնով) Ի՞նչ եք կամենում։

ՖՐԻՑ. Դուք յեղե՞լ եք հրապարակում։

ԳՐՈՍՍ. Այո, յեղել եմ։ Յես ամեն տեղ ել յեղել եմ։ Բայց Կարլը չկա... իմ խեղճ տղա։

ՖՐԻՑ. Հանկարծ իմ գլխարկի խանութն ել տեղահան չանեն։ Նրանք ցույց են անում, իսկ յես պիտի վճարեմ ջարդված վիտրինաների փողը։ Հանաք բան է ասել, ի՞նչ արժե հիմա հայելին վիտրինաների համար... Սատանան գիտե ինչ (հուզված շրջում է սենյակում) Պրեզիդենտ վոստիկանին պետք է հանել պաշտոնից։

ԼՈՒԻԶԱ. Դուք ասում եք, վոր նրան պետք է հանե՞լ։ Չէ՞ վոր նա յել ձեզ նման սոցիալ-դեմոկրատ է։ Ձեր դրպաններում միևնույն կուսակցության տոմսեր են գտնվում։

ՖՐԻՑ (կանգ առնելով). Այո, մեր տոմսերը միատեսակ են, մենք միևնույն կուսակցության անդամներ ենք, բայց պրեզիդենտ վոստիկանը անչափ թուլամորթ է։ Բոլշևիկական լրբերի հետ պետք է հաշիվ տեսնել վոչ թե միայն մայիսի մեկին, նրանց տոներին, այլ ամեն որ։ Ամեն որ պետք է արմատախիլ անել կարմիր ախտը։ Թող կառավարությունն ել ավելի խիստ, դաժան միջոցներ ձեռք առնի բոլշևիկներին պատժելու։ Կառավարությունը թող բոլշևիկների համար բանտեր կառուցելու տուրքի նոր օրենքն ընդունի, յես մեծ ուրախությամբ կմուծեմ իմ հասանելիքը։ Համենայն դեպս, այդ ավելի եժան կնստի, քան վիտրինաների նորոգումը (պաուզա)։ Սակայն, կառավարության պաշտպանության նոր օրենքն ուժեղ կխփի այդ սանձարձակ լկտիներին։

ԼՈՒԻԶԱ. (Տեղից բարձրանալով). Դուրս, դուրս [illegible] այստեղից։ Գարշելի... ծախու անասուն... Հեռացեք անմիջապես։

ՖՐԻՑ. (վախեցած). Յես չեմ գնա... դրսում կրակում են... կարող են ինձ սպանել... մի մոռանաք, վոր դուք ապրում եք իմ տանը, և այս բնակարանը պատկանում է ինձ, Ֆրից Գրյունվալդին։

ԼՈՒԻԶԱ. (Հեգնանքով)։ Ազգի քաջ պաշտպան։ Սոցիալ-դեմոկրատ



ԳՐՈՍՍ. (օրօրվելով գնում է դեպի դուռը). Յես գնում եմ... յես գնում եմ իմ Կարլին փնտրելու... Միայն թե Կարլս չսպանեյին։

ԼՈՒԻԶԱ. (գրկում է նրան) Հանգստացիր Մարգարիտա։ Չէ՞ վոր իմ ամուսինն ել այնտեղ է... Գուստավը... դուք գիտեք ինչքան եմ սիրում յես նրան։ Հանգստացեք, նստեք։

ԳՐՈՍՍ. Վոչ, յես կգնամ։ (վազում է դեպի դռները). Կարլ իմ թանգագին զավակս։ (Անհանգստանում է)։

ՖՐԻՑ. (Սիգար է ծխում) Ի՞նչ է ծեծել վորդուն։ Ազնիվ հոլլանդացին չի կարող լինել ապստամբների հետ։ (Պաուզա)։ Սատանան տանի, մինչև հիմա դեռ կրակում են։ Յես դեռ չեմ ճաշել։ Գրետան անբավական պիտի լինի։ Նա չի սիրում, յերբ յես ուշանում եմ ճաշին։ Սուպը պիտի սառի... Այսոր այնպես համեղ ճաշ է...

Դանդաղ մտնում է Վիլլի Բեյնինգերը

ԼՈՒԻԶԱ. Վիլլի... Գուստա՞վը...

ՎԻԼԼԻ. Վողջ է։

ԼՈՒԻԶԱ. Ձերբակալվա՞ծ է։

ՎԻԼԼԻ (Գլխով բացասական նշան է անում). Առայժմ վոչ։

ՖՐԻՑ. Իսկ այն լակոտը, խելագար Մարգարիտայի տղան, վստահ եմ, կենդանի՞ յե։

ՎԻԼԼԻ. Վոչ։ Նա մեռավ։ Նրան սպանեցին։

ԼՈՒԻԶԱ. Կարլին սպանեցի՞ն։

ՎԻԼԼԻ. Այո։ Նա ամբողջ ժամանակ, կարմիր դրոշակը ձեռքին, գնում եր կոլոնայի առջևից։ Ֆաշիստները ուզում եյին խլել դրոշակը— նա չտվեց։ Մեկը պայթուցիկ փամփուշտով փշրեց նրա գանգի կեսը։

ԼՈՒԻԶԱ. Խեղճ Մարգարիտա։ Վերջին կերակրողը։ Այդ նրան կսպանի։

Անհաստատ քայլերով մտնում է Գուստավը։ Նա ինչ վոր տարօրինակ է բռնած ձախ ձեռքը, ճակատին արյան հետքեր։

ԼՈՒԻԶԱ (Վազում է դեպի նա). Գուստավ... դու վողջ ես։

ԳՈՒՍՏԱՎ. Յես վողջ եմ... բայց շատերն ընկան... փոքրիկ Կարլ Գրոսսը իր տոնական հագուստով... Հանս Վայտկոֆը... Վիլհելմ Բրոշվարտը... Կլարա Ռայֆը... նրանք այլևս չկան։

ԼՈՒԻԶԱ (ասես զառանցանքի մեջ կրկնում է). Կլարա Ռայֆ.. Վիլհելմ Բրոշվարտ... Հանս Վայտկոֆ (նկատելով Գուստավի ձախ ձեռքը) Ձեռքդ ի՞նչ է եղել, այս դու վիրավորվա՞ծ ես։

ԳՈՒՍՏԱՎ. Դատարկ բան է։ Թեթև քերվածք է...

ԼՈՒԻԶԱ. Տուր նայեմ (վերցնում է նրա ձեռքը։ Գուստավը ցնցվում է անտանելի ցավից), ձեռքի վրա արյուն... Արյուն ճակատին...

ՎԻԼԼԻ. Արյունը շատ է, շատ է, բայց այդ արյան համար մենք կանգնած ենք... Մենք և մեր զավակները, մեր թոռները, յես հիսուն

տարեկան եմ, յես անկուսակցական եյի, բայց այսօրվա օրը ինձ դարձրեց կոմունիստ, բոլշևիկ։

ԼՈՒԻԶԱ (Ֆրիցին), Լսո՞ւմ եք դուք, պարոն սոցիալ-դեմոկրատ։

ՖՐԻՑ. Ինձ այդ բոլորը ամենևին չի յել հետաքրքրում։ Սատանան գիտե ինչ ե,.. Նրանց սպանում են, իսկ նրանք բոլշևիկներ են դառնում։ Զզվելի ինչ ե անում վոստիկանությունը․․ (Ներս անցնում ե)։

(Մտնում ե Մարգարիտան։ Նրա հայացքը—թափառող ե, ձեռքերը տարօրինակ պարզած, ասես թափահարում ե թևերով և ուզում ե թռչել։ Նրա ամբողջ տեսքը հիշեցնում ե լուսնոտի)։

ԳՐՈՍՍ. Վոչ մի տեղ չգտա Կարլին... յես ամեն տեղ փնտրեցի նրան և վոչ մի տեղ չգտա։ (Գուստավին) Նա հագած եր նոր կոստյում, դեղին կոշիկներ և խայտաբղետ փողկապ։ (Լուիզային), Ձե՞ր վոր նա միայն 17 տարեկան եր, իմ միակ զավակը։ Փողոցներում [վոչ վոք չկա, ամեն տեղ դատարկություն, միայն վոստիկաններ են շրջում ու սանիտարական կառքերը տեղափոխում են ինչ վոր հիվանդների։ (Բոլորին) դուք նրան վոչ մի տեղ չե՞ք տեսել։

ԼՈՒԻԶԱ. Նստեք, հանգստացեք, Մարգարիտա։ Հանգստացեք, սիրելիս։ (Համբուրում ե նրան)։

ՎԻԼԼԻ. Նա կենդանի չե։ Ձեր Կարլը կենդանի չե, նա ապրում ե այստեղ, մեր սրտերում։ Նրա արյան համար, բոլոր տանջված պրոլետարների արյան համար մենք կպահանջենք անչափ թանգ վարձ։

(Բեմի հետևում խումբը, առանց խոսքերի յերգում ե «Դու զոհ գնացիր»։

ԳՈՒՍՏԱՎ. Վրեժխնդրության օրը կգա։ Շուտով կգա։ Ռուսաստանում նա յեկավ 1917 թվին, նոյեմբերի 7-ին։ Նոյեմբերի 7-ը կլինի նաև մեզ մոտ, կլինի Աֆրիկայում, Ավստրալիայում, Չինաստանում, Ճապոնիայում,—ամեն տեղ, ուր կա մարդկային կյանք, ուր չքավորը հպատակվում ե հարստին, ուր թագավորում ե քմահաճույքը, անիրավությունը ու ծաղրանքը... Թող վառ մնա բանվորական գործի պայքարում զոհվածների հիշատակը։ Նրանց անունները արյամբ կգրվեն համաշխարհային հեղափոխության եջերում։ Կոմունիզմի հաղթանակի համար նրանց կփոխարինեն միլիոնավոր նոր մարտիկներ։

(Բեմի հետևում խումբը յերգում ե «Ինտերնացիոնալ»

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

[redacted]

Ответственный редактор М .М. Гигоян
Техредактор Г. М. Маркарян

№ 2251
1932

Сд. в наб. 7/III —1932 г.
Сд. в печат 11/III—1932 г.
Об'ем 2½ печ. листа
Тираж 1000 экз.

Ростов н-Д. ГЕТСККПО—с-ф А 5—148x210№ 1283 Уполкрайлита№ 1262

ՀՀ Ազգային գրադարան
NL0310914

10651

12.130

На армянском языке

Н. Мерцальский и В. Громов
**ПРОЛЕТАРИАТ ЗНАЕТ**

Юр. Данцигер
**БОРЬБА ЗА УЛИЦУ**

Беретинский и Гайдовский
**К Р О В Ь**

Сборник пьес

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՎԱՃԱՌԱՏԸ՝
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)